

ՀՏԴ 891.981 - 1 Կոսյան  
ԳՄԴ 843 - 5  
Կ 752

ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ

*Հրատարակվել է պետպատվերով:*

## ԿԻՍԱԲԱՑ ՀՈՒՇԵՐ Բանաստեղծություններ

Կոսյան Սամվել  
Կ-752 Կիսաբաց հուշեր: / Բանաստեղծ. / Սամվել Կոսյան - Եր.:  
ՀԳՄ հրատ., 2008.- 128 էջ:  
*Ժողովածուն ընդգրկում է հեղինակի վերջին  
տարիների բանաստեղծությունները:*

ԳՄԴ 843 - 5

ISBN 978-99941-74-90-4

© ՀԳՄ հրատ.,  
Կոսյան Ս., 2008

Երևան  
ՀԳՄ հրատարակչություն  
2008

**ԱՊՐԵԼՈՒ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

\* \* \*

«ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ» բանաստեղծական ընկերությունը  
ներկայացնում է  
Սամվել Կոսյանի պոեզիան  
մոլորակի Չայաստան կոչված տարածքում...

Գլխավոր դերում ինքն է՝ Կոսյանը,  
միայն թե նկարահանումները կատարվել են գաղտնի,  
և հենց առաջին կադրից երևում է  
ինչպես է նրա հոգին շուտ-շուտ նրան լքում  
ու վերադառնում է ուշ գիշերով,  
վերադառնում է հարբած, գոռալով ու աղմկելով,  
որի համար հարևանները ոստիկան են կանչել,  
իսկ մի անգամ նրան տարել են ոստիկանություն,  
որտեղ հոգին խոստովանել է,  
որ նա դա անում է, որպեսզի Կոսյանը  
հասկանա ինչ հրաշալի բան է ազատությունը...

Շարունակությունն ավելի զավեշտական է՝  
հոգին գործարքի մեջ է մուսայի հետ,  
մուսան էլ գունավոր թիթեռ է,  
որ չի սիրում մի տեղ երկար նստել  
և գործարքից հետո իջել է բանաստեղծի ձեռքին  
և մնացել է ընդամենը մի քանի վայրկյան,  
և այդ վայրկյաններում է բանաստեղծը գրել.  
«Ժամանակն ինքն է ընտրում բառերը,  
բառերն էլ ստիպում են իրենց այնպես շարել,

ինչպես հարմար է ժամանակին»:  
Ընդամենը այսքանը, ոչ մի հիացական թռիչք,  
ոչ մի ծաղիկ, ոչ մի առեղծվածային կին,  
ոչ մի երկխոսություն, ոչ մի հայացք,  
ամեն ինչ առանց գեղարվեստական շպարի,  
ամեն ինչ սև ու սպիտակ  
և շարունակության մեջ էլ գույներ չկան՝  
ամեն ինչ սև ու սպիտակ,  
հուղարկավորները բանաստեղծին  
տանում են գերեզմանատուն,  
որն էլի նրա հոգու խաղերից է,  
իբր նա դա անում է հասկացնելու համար,  
թե մարդկությունը ինչ կորուստ է կրել,  
թե Կոսյանը ինչեր կարող էր անել, որ չի արել,  
թե բանաստեղծը մի անգամ չէ՝  
հազար անգամ է ծնվում,  
և այդքան անգամ էլ մահանում է,  
բայց թաղում են մի անգամ ու վերջնական...

\* \* \*

Ես կարող էի ավելին,  
եթե լուսինը չթաքնվեր  
ու չհայտնվեր բառի եզրին...

Միշտ վախեցել եմ անզգույշ բառերից,  
որոնց տակ դատարկությունն ավելին է,  
քան Կիևյան կամրջի տակ...

Ես մի քանի անգամ ընկել եմ կամրջից,  
ես մի քանի անգամ ապրել եմ  
դատարկության ատամների  
հայտնվելը հոգուս մեջ...

Ընկնում էի ու մտածում՝  
ես եմ կյանքը,  
ու Երկիրը իմ մեջ է ծնվել  
ու ինձ հետ էլ ընկնում է ցած...

Երբ լուսինը թաքնվեց,  
ինձ հենց այդպես էլ թվաց...

\* \* \*

Օ՞ձն է մոտ բնությանը, թե՞ բառը,  
պայծառատեսությունը օձի՞ համար է, թե՞ բառի,-  
ահա որտեղ էր պետք  
Տիրոջ տեսանելի ներկայությունը,  
մյուսները  
հեշտությամբ են անցնում կյանքի մաղով,  
ինչպես մանկությունը  
պատահականությունների թելադրանքի միջով...

Սարսափելի ու դժվար է հաշտվել,  
որ կյանքը փուչիկ է թեկուզև գունավոր,  
որ փուչիկ փչողները  
փուչիկները փչում են  
բարեգործների ու փրկիչների կերպարանքով,  
իբր, ահա ձեր կյանքը՝  
կլոր, գունավոր ու հարթ,  
օգտվեք զգուշորեն,  
որ չպայթի հանկարծ...

Զգուշորեն, ինչպես ձկները ակվարիումում,-  
հիշողությունների ջրիմուռների միջով  
մենք լողում ենք ետ ու առաջ՝  
մեր շարժումների շարունակությունը  
մեր խռիկների մեջ հավաքելով,  
մեր երևակայությունը հարմարեցնելով  
փուչիկի գունավոր դատարկությանը...

Ետ ու առաջ լողալով,  
ինչպես բառը,  
ինչպես օձը, որ ջրիմուռներին հիպնոսելով,  
մահը ներկայացնում է  
որպես չքնաղ պատկեր...

Երբ իրականում կախաղան են  
և՛ բառը,  
և՛ օձը,  
և՛ փուչիկը գունեղ...

\* \* \*

Կյանքը ցանկապատ է... հնարավոր է և հակառակը,  
դրանից ցանկապատը չի քանդվում և ավելի ցածր չէ  
և արդեն քանի տարի  
չեմ կարողանում ցանկապատը հաղթահարել  
(տարիները չեմ հաշվել,  
կարծես դեռ մեր թվարկությունից առաջ էր...):

Ցանկապատի վրա  
ճանաչված շատերի գրություններն են մնացել՝  
տողեր, տողեր, տողեր...  
անուններ, անուններ, անուններ,  
որ ցանկապատի մաշկի մեջ ներծծվել,  
վերածվել են մարդաբանական քարտեզի...

Ոչինչ չեմ գրել, հիմա էլ չեմ ուզում գրել,  
փոխարենը  
ցանկապատին  
իմ ոսկորների պատկերն եմ նկարում  
հատ-հատ, չափը՝ չափի,  
մարմնիս հավասարակշռությունը չխախտելով,  
ոսկորները մարմնիցս հանելով,  
թեթևանալով, թեթևանալով,  
որ քամին կարողանա մարմինս բարձրացնել,  
թոցնել ցանկապատի վրայով  
դեպի ո՞ւր՝ ինքս էլ չգիտեմ,  
կարևորը՝ ինչ-որ բան փոխել է պետք,  
ինչ-որ միջավայր,  
ինչ-որ փիլիսոփայություն,  
ինչ-որ կենսաձև,  
որ թռիչքները դառնան կամավոր  
և մարմնի ու հոգու հավասարակշռությունը փոխվի  
այս պահին, վաղը և ամեն օր...

... և ցանկապատը քանդվի, որ անջատում է,  
ցանկապատերի պես բոլոր...

\* \* \*

Թռիչքը թռիչքի վրա,  
թռիչքը թռիչքի տակ,  
թռիչքը թռիչքի ետևում,  
թռիչքը թռիչքից առաջ...  
այսպես է երկինքը խելագարվում,  
սևանում ու շիկնում,  
զղջալով,  
որ ինքն է թռիչքների հովանավորը...

Երկինքը երկնքի վրա,  
երկինքը երկնքի տակ,  
երկինքը երկնքի ետևում,  
երկինքը երկնքից առաջ...  
այսպես է տիեզերքը խելագարվում,  
սևանում ու շիկնում,  
զղջալով,  
որ ինքն է երկինքների հովանավորը...

Ու ոչ ոք չգիտի,  
որ ես եմ  
այդ ամենի  
աճյունասափորը...

\* \* \*

Պայծառատեսության համար շատ բան հարկավոր չէ,  
իրականությունը նորից մերժելու է, և նորից  
ռոմանտիզմի կարկատաններով շալվարը հագիս  
թափառելու եմ աշխարհով, մտածելով,  
որ նաև իմն են գինով լի այս բաժակները,  
չքեղ ապարանքները, մետաքսապատ ննջարանները,  
ոսկեզօծ ջահերն այս և կանանց սաղափե  
մարմինների շողարձակումները – որից կուրանում են –  
և ամենակարևորը – ես փառքի իմ բաժինն եմ ակնկալում,  
պատմության գրքի մեջ փորձում լայնացնել իմ տեղը,  
ու սեփնեթանքների ճարպագույններից զզված,  
սեղանի տակ շոյել փիլիսոփայության ծնկները,  
տրվելով տիեզերական հաճույքներին...

Բայց այս ամենը վաղը,  
ռոմանտիզմի կարկատաններով շալվարը  
ճնրթված, ընկած է անցյալի տակ,  
այսօր մոմի լույսին հաված, ցրտից դողացնելով  
փորձում եմ կոպեկներս հաշվել`  
ապառիկ կյանքի  
տոկոսները վճարելու համար...

\* \* \*

1.

Ենթադրում եմ՝ ովքեր են ինձ խանգարողները,  
ինչո՞ւ են ինձ ընդունում  
որպես չճանաչված բանաստեղծությունների ժողովածու:

Ավելի դաժան է երկրի ճակատագիրը,  
ծնկել է, մշուշը սրբիչի պես ճոճվում է աչքերի դեմ,  
և դատավորի ձայնը, որ հաշվում է՝  
մեկ, երկուս, երեք...  
Մի՞թե պարտություն է  
և երկիրը չի կարողանալու ոտքի կանգնել...

Հերթական չճանաչված բանաստեղծությունը  
փսիհների պես կախվում է թղթի շուրթից,  
ցավը՝ ահա գարշահոտ ջրով լի ակվարիումը,  
որի մեջ լողում են բառը, հիշողությունն ու հեռանկարը  
և ծափահարություններ... ճնճղուկներ,  
որ թռչում են միանգամից,  
ծգելով պատահականությունների լարը,  
որ անցնում է իմ միջով և հանգուցվում  
սիրո պարանոցին...

Դատավորը շարունակում է հաշվել՝  
չորս, հինգ, վեց...  
Կանգնի՛ր, խնդրում եմ, ոտքի կանգնի՛ր,  
երկիր իմ, բարձրացի՛ր,  
որ կարողանաս մարտը շարունակել...

\* \* \*

2.

Ինչ-որ մեկը  
ծգում է պատահականությունների լարը,  
որ իմ միջով  
հանգուցվում է երկրիս պարանոցին...

Ցավի ակվարիումի մեջ լողացող  
ծկնիկ է քաղաքական շահը,  
ամեն ինչ պարզ է և ամեն ինչ թափանցիկ  
ու ամեն ինչ՝ ապակու ետևում...

Ավելի անթափանց է իմ երկրի ճակատագիրը,  
թվում է՝ ծնկել է,  
թվում է՝ մշուշը չի ցրվելու,  
և մշուշի միջից դատավորի ձայնը՝  
մեկ, երկուս, երեք... մի՞թե  
պատահականությունների լարը  
չի թողնելու երկրին ոտքի կանգնել,  
կանգնի՛ր, խնդրում եմ,  
ոտքի կանգնի՛ր,  
երկիր իմ, բարձրացի՛ր,  
որ կարողանաս մարտը շահել...

Զե՞ որ քո հին մարտերն էլ չեն ավարտվել...

Իսկ աշխարհը շարունակելու է հաշվել՝  
չորս, հինգ, վեց...

\* \* \*

Բանաստեղծությունն էլ  
չի բացում դուռը իմ առջև,  
թակիր մինչև իրիկուն,  
մինչև խլությունը խժռի կենսագրությունը,  
և դեմքդ ճաք տված ափսեի պես  
կդնեն քո առջև,  
մեջը՝ թրջված վիճակախաղ ու...  
մնացյալը դժվար է գուշակել:

Մեկն ինձ օղի տվեց,  
հետո հրեց ու զցեց բաժակի մեջ,  
և ոչ մեկը, մտերիմ ոչ մի բառ,  
անգամ ձեռքը չմեկնեց փրկելու ինձ,  
տեղափոխելու հոգևոր մի միջավայր,  
որ հեշտ լիներ երևակայելը,  
իբր դեռ չեմ մեռել, իբր,  
այս փորձությունը միակ հնարավորությունն է,  
մեծ, ավելի մեծ սեր բեղմնավորելու համար,  
իբր մահը, որ հայտնվելու է աչքերիս մեջ,  
ուրիշինն է, ուրիշ մի բանաստեղծի,  
իմ կյանքը բալենու պես  
շարունակում է աճել և արշալույսներից  
երկիր է բերելու նրա պտուղների փայլը...

Այդպես կարող է քամին էլ արդարանալ,  
որ բառերը ցրում է տանիքներից,  
պոկում է պատուհանները փիլիսոփայության,  
չհասկանալով, չգիտակցելով ինչ է ապրելը,  
որովհետև մեջը մահ չկա բոլորովին...

Դատարկություն, ունայնություն...  
թակոցներ, կիսաքանդ շրջանակներ...  
չի բացում, բանաստեղծությունը դուռը չի բացում,  
երբ հնարավոր չէ առանց նրա  
ապրել և կամ մեռնել...

\* \* \*

Ես այս ժամանակի հարազատը չեմ,  
այս ժամանակը  
ինձ որդեգրել է, խլելով ապագայից,  
և որքան էլ ինձ շպարում է,  
շուտ-շուտ փոխում է դեմքիս արտահայտությունները,  
միևնույն է,  
ապագան թափանցում է մաշկիս տակից,  
և ծիծաղելի են թվում  
այս ժամանակի սեթևեթանքները,  
երբ իմ բառերը խուլ են  
ներքին արյունահոսությունից,  
երբ գիշերները կեղևի պես  
փակում են հեռանկարը, և հնարավոր չէ  
թռչել ատելության փոսերի վրայով,  
երբ հանկարծակի  
ամեն ինչ դառնում է անիմաստ ու անտանելի...

Բայց նա գալիս է,  
զգում եմ, որ անընդհատ գալիս է,  
ջուր եմ խմում, թախծում եմ,  
իսկ նա գալիս է,  
սուզվում եմ հիշողությունների ջրի մեջ,  
իսկ նա գալիս է,  
պահմտոցի եմ խաղում մահվան հետ,  
իբր հարց է՝ ով կհաղթի,  
միևնույն է՝ գալիս է,  
ապագան գալիս է,  
և իմ մարմինը,  
իմ բառերը,  
իմ շնչառությունը  
բղավում են, որ միայն ինձ է լսելի.  
մայրիկ, ես այստեղ եմ...



\* \* \*

Եթե ուզում ես սիրել,  
գնում ես դեպի ազատություն,  
և անգամ ամենաերկար ճանապարհը  
սկսվում է առաջին վեհերոտ քայլից...

Մեր աչքերի առաջ  
կերպարանափոխվում է մշակույթը՝  
կոպերն ուռած են,  
շրթունքները՝ կապույտ,  
քարշ է տալիս ոտքերը՝  
անընդհատ նյութին հենվելով,  
որ չընկնի, որ...

Միշտ էլ աշխույժ են մտքի որսորդները  
ապրելու, մեռնելու,  
ազատության եռանկյան մեջ,  
որոնց ուսերից  
հրացանի փոխարեն  
կախված է մահվան պատկերը  
և մշակույթի մարմինը խեղճ...

Եթե ուզում ես սիրել, գնում ես դեպի ազատություն,  
միայն թե  
պիտի կարողանաս առաջին քայլը անել...

Զգիտեմ ինչո՞ւ եմ շրջվում,  
շրջվելը  
փրկության հույս է երկի  
կամ էլ փախուստ՝  
ինձանից,  
որսորդներից,  
հավերժական եռանկյունուց...

\* \* \*

Մեկի թեթև ձեռքով  
իմ մեջ հայտնվեց որբությունը,  
դառնալով աշխարհին նայելու իմ պատուհանը  
և աշխարհից թաքնվելու իմ տունը...

Որբի տեսածի մեջ  
ամպերի կաթը ճերմակ չի լինում  
և հրեշտակի թևերը  
հյուսված չեն խաղաղության շյուղերով,  
ամձրև է, թե չէ,  
որբի հոգին կաթում է՝  
ծածկելով որբի օրերը  
կանաչ ու լայրժուն մամուռով...

Որբի հայրենիքն էլ ուրիշ է,  
քարտեզներն այդ հայրենիքը  
գիշերները ջնջում են իրենց մաշկից,  
և կայարաններում գնացքների ձայնը  
անիվներից չէ կամ ռելսերից,  
որբի ոտնաձայներն են,  
երբ վազում է գնացքների ետևից,  
մտածելով տարածք է որբությունը,  
մտածելով՝ հնարավոր է այդ տարածքը հաղթահարել...

Բայց դեռ ոչ մի որբի  
չի հաջողվել գնացք նստել...

Որբերը միշտ ու անընդհատ ուշանում են...

\* \* \*

Աշխարհը ձեր միտքն է,  
իսկ ձեր միտքը  
աշխարհի պատկերն է ձեր ներսում,  
որ ամեն օր  
փորձում եք բառերի վերածել,  
որ չեն լսվում և կամ  
ես չեմ լսում, որովհետև  
ուրիշ մի ձայն ստիպում է  
հայ-լատիներեն բառարանը բացել  
և իմանալով, որ բառարանը տանը չկա,  
հորդորում է գնալ գրադարան,  
իսկ բառարանը գրադարանում էլ չկա,  
ու ձայնը փակուղի է կարծես  
իմ ու իմ ապրելու միջև...

Բառարանի մեջ է նոր աշխարհը երևի,  
որը չի երևում, որը  
միջի պատկերի տակ թաքնվել  
իմ երևակայությանն էլ չի հարմարվում...

Նման մի զգացում ես էլի եմ ապրել,  
երբ մայրս շնչում էր,  
բայց այլևս անկարող էր ինձ հետ խոսել...

\* \* \*

Նորից ծնեմ, նորից ցուրտը  
հեռացնում է հեռանկարը,  
և միտքը, որ տաքանալու համար  
վառելու ես քո ամենավերջին բառերը,  
սառույցի պես կախվում է  
փիլիսոփայության ցանցառ մորուսից...

Սկզբի տրամաբանությունը վերջն է,  
եթե կա վերջը,  
սկիզբը անհեթեթ է նույնքան,  
որքան ծյունը,  
որքան սառույցը,  
որի վրա սաթաքուն եմ,  
հավատալով, որ քառսն է իրական,  
մնացած ամեն ինչը գիծ է,  
գծեր, որ փորձում են  
քառսը մասերի բաժանել,  
իբր սա մայրցամաք է,  
սա՝ օվկիանոս,  
իսկ սա՝ մարդու երևակայությունը,  
որը դեռ չի գտել մարդուն...

Ձյունը շարունակում է իջնել,  
հետզհետե ծածկելով գծերը,  
խոնավությունից ծխում  
ու չեն վառվում բառերը...

\* \* \*

Միջանկյալ է տունը, որի մեջ ապրում եմ,  
միջանկյալ է երկիրը, որ իր վրա է պահում տունը,  
միջանկյալ է աշխարհը,  
որ տիեզերքի հարկը չի մուծել,  
միջանկյալ եմ ես,  
որ հոգնել է տնից, երկրից ու աշխարհից,  
որ իր մարմնից է հոգնել,  
որի մեջ են տունը, երկիրն ու աշխարհը...

Մանեկենը մոռացել է ժպիտը սրբել,  
մատնահետքերը նրա ժպիտը փոխել`  
դարձրել են սևագրություն  
և մատնահետքերի մեջ պիտի մարդկանց հոգսը փնտրել,  
չնայած ժպիտը չէ, հոգսը չէ,  
միջանկյալ է հոգսի գույնը...

Իմ միտքը ավելին չէ, քան ճանապարհորդ,  
որին չի ընդունում ոչ մի նավահանգիստ,  
ոչ մի հյուրանոցում նրան տեղ չեն տալիս,  
բայց շարունակում է ճանապարհորդել,  
որովհետև միտքը պիտի շարժվի, և նավահանգիստը չէ,  
հյուրանոցը չէ,  
միջանկյալ է շարժման գույնը...

Ես դեռ չեմ որոշել  
հեռանալուց հետո  
որտեղ եմ պահելու իմ անունը,  
որ ապրելուց շատ է սկսել ինձ հալածել,  
որ ամառանոց է դարձրել հիշողությունը,  
որի պատուհանները նայում են տոնավաճառներին,  
և հիշողությունը չէ,  
տոնավաճառը չէ,  
միջանկյալ է իմ հեռանալու գույնը...

\* \* \*

Փողոցի կերակրափողի միջով  
(սա պատկեր չէ,  
այլ` իրողություն,  
որ փողոցի սնունդը մենք ենք եղել,  
և քաղաքը աճել է մեզ խժռելով),

Ուրեմն փողոցի կերակրափողի միջով  
տեսա  
ինչպես էր գիշերը  
սատանայի շուրթերը համբուրում...

Ես օտարակա՞ն էի,  
թե՞ լույսի հետապնդումներից փրկված չղջիկ,  
իմ քաղաքո՞ւմ էի,  
թե՞ ուրիշի երազի մեջ...  
Միայն թե սատանայի ձեռքը  
հիշողությունս էր դատարկում  
և առաջինը մանկությունն էր,  
որ ընկավ աղբարկղի մեջ:

Ես իմ քաղաքո՞ւմ էի,  
թե՞ ուրիշի...  
Հիշողությանս մեջ  
միայն ընկճվածություն,  
միայն հիասթափություն,  
միայն իմ աղավաղված պատկերը`  
մոլորված թռչնի պես  
հիշողության պատերին խփվելով...

Եվ իմ օրերը,  
որ ճաքում էին սատանայի շուրթերի սառնությունից...

\* \* \*

Մեռնելն արվեստ է, ինչպես որ ամեն բան,  
երբ նայում ես հեռվից  
ու հեռադիտակը սիրտն է...

Անձրևոտ մռայլ օրը  
ագռավի պես լուսաֆորի վրա,  
չգիտեմ ինչ եմ փնտրում կայարանում,  
երբ դիմավորելու ոչ մեկը չկա,  
ոչ էլ ուզում եմ մի տեղ գնալ...  
Ագռավը կայարանը քշել է իմ մեջ,  
ինչպես ես եմ կայարանի ներսում,  
դրսում գնացքներն են,  
որ այս կայարանում կանգ չեն առնում,  
որովհետև այստեղ ոչ մեկը չի իջնում  
և այստեղից ոչ մեկը չի ուզում ուրիշ մի տեղ գնալ...

Մեռնելն էլ արվեստ է,  
եթե քո ներսում ես մեռնում,  
դրսում մարմինն է,  
որ հաճոյանում է հուղարկավորներին...

\* \* \*

Իմ մանկության ընկերներին  
չէի տեսել տասը տարի՝  
Սուրիկ Նարեկացյանին,  
Ռուբիկ Վարդանյանին,  
մյուսներին՝  
Ջրայրին, Ժուղեքսին և Սարգսին,  
վերջերս առիթ էր եղել տեսնելու,  
երբ մահացել էր Վարդանը...

Չիմա իրար գլխի հավաքվել,  
խոսում ենք դես ու դեմից,  
մինչև որ Ռուբիկը առաջարկեց  
ընկերության կենացը խմել,  
և որովհետև  
հիշողությունը մեր շուրջն էր հավաքել  
մեր բոլոր ընկերների պատկերները,  
միասին խմեցինք,  
հավատալով,  
որ ընկերությունն է փրկելու աշխարհը:

Մենք մեր կյանքն ապրել էինք՝ լավ թե վատ,  
մեզ հաջողվել էր բարևել հրեշտակներին,  
երբեմն էլ սատանայի հետ բազար անել,  
հաջողվել էր չարի դեմ  
թաքստոց դարձնել մեր մարմինը,  
երբեմն էլ մերկ լինել ստի պես,  
հաջողվել էր մեր երջանկությունը փռել  
ինչպես սփռոց,  
վրան շարել մեր մաղթանքներն ու հյուրասիրել,

Երբեմն էլ հյուրասիրել են մեզ,  
կյանք է՝ պիտի տաս, որ վերցնես...

Եվ միասին խմեցինք ընկերության կենացը,  
հավատալով,  
որ ամենասկզբում  
ընկերությունն է եղել,  
հետո կենացը ընկերության  
և նոր միայն աշխարհը,  
որ հնարավորություն լինի  
ընկերությունը շարունակել...

\* \* \*

Ոտքերս ցավում են  
չնայած ճանապարհորդ չեմ,  
գուցե դրանից էլ ցավում են՝  
ճանապարհների կարոտից...

Անծանոթ է  
ինձ մանկության քաղաքն ինձ՝  
կուշտ ու տռզած որովայն,  
որ ինչ-որ մեկը կախել է երկնքից  
ու սովորությունն է միայն  
ինձ ստիպում կախվել հուշերից,  
(չհոգնեն, չհոգնեն ձեռքերս...)

Ինձ տրված դերը կամ իմը չէ  
և կամ լավ չեն խաղում,  
ինձ լսելի չեն ծափահարությունները,  
որովհետև  
երշիկի կտորի պես փակված են որովայնում,  
որը չի շարժվում  
կամ չի կարողանում շարժվել,  
որովհետև  
ճանապարհը փակել են  
ավելի մեծ կտորները,  
որը չի շարժվում  
կամ չի կարողանում շարժվել,  
որովհետև  
ցավում են ոտքերը...

\* \* \*

Գրպանահատի ձեռքը  
արդեն երկնքի գրպանում է,  
երկրի գրպաններում  
պարապ հույս էլ չկա...

Քաղաքի գերեզմանոցների  
երեկվա հանրահավաքներում  
սոցիալական արդարության մասին  
կոչեր էին գերեզմանաքարերը ցնցում,  
որից տարեվերն ու անունները  
պոկվեցին ու ընկան,  
և մահը միանգամից  
կորցրեց անուն ու ազգանուն,  
դառնալով երկնքի պես համատարած...

Եվ բոլորի ձայնը  
որպես մի ձայն էր հնչում,  
ելույթը թվում էր  
դժգոհության մաշված-կեղտոտ ծածկոց...  
«Մեզ ինչո՞ւ են մեկուսացրել,  
եթե ապրողների մեջ մահն ավելի շատ է,  
ինչ տարբերություն՝  
մարդն էլի մարդ է  
կենդանի թե մեռած»...

Գրպանահատի ձեռքը  
անհուսորեն  
մահվան գրպանն է փնտրում,  
փնտրում էր երեկ,  
փնտրում է այսօր  
ու վաղն էլ է փնտրելու...

... Կյանքը գրպանների մեջ է,  
իսկ մահը գրպան չունի...

\* \* \*

Չեն ձևացնում, թե ապրում են,  
այդ կյանքն է ձևացնողը  
իբր իմ մեջ է...

Մի՞թե մենակությունը  
կարող է այդքան խոնավ լինել,  
հիշողությունս ներծծված է ջրով,  
և ջրից հիշողության ծեփը թափվում  
լցվում է երևակայությանս մեջ,  
որից ամեն ինչ երևում է  
որպես կանաչ մամուռ,  
որպես դատարկություն,  
որպես ժամանակի փլված կամուրջ,  
որի ոչ վրայով է հնարավոր անցնել,  
ոչ էլ տակով...

Չեն ձևացնում, թե ապրում են,  
այդ կյանքն է ձևացնողը  
իբր իմ մեջ է...

Ոչ ոք չգիտի  
մարդկության փրկությունը ինչին խաչել:  
Միայնակ, չորացած ծառը  
կախադանի համար է և ոչ խաչելության...  
Ես իմ թևերն եմ տալիս նրան,  
ու խաչի աչքերը շրջվում են դեպի երկինք...

Ես էլ երկնքից եմ եկել,  
մենակների հայրենիքից,  
ու առաջինը  
իմ թռչելու կարողությունն են խաչել,  
ամենաառաջինը,

Երբ դեռ չէին հասցրել վրեժխնդիր լինել  
Տեր Զիսուսից...

Չեմ ձևացնում, թե ապրում եմ,  
այդ կյանքն է ձևացնողը  
իբր իմ մեջ է,  
Երբ վաղուց դատարկված եմ  
անգամ ինքս ինձանից...

\* \* \*

Արթնանում եմ ծափահարություններից...  
Անկասկած երկիրը կա և ոչ մի երագ  
նրան չի կարող սպառել...

Ծափահարություններն ընդհատվեցին...  
Երևի ձայնագրություն էր...

Մեռյալները հաշիվ են պահանջում,  
ինչ-որ մեկը նորից անտեսել է  
ողբերգության նշանակությունը...

Իրաքում ընդարձակվում է մահվան փոսը,  
որն անմիջապես լցվում է նավթով  
գրգռելով ստամոքսում կուչ եկած  
քաղաքականության երևակայությունը...

Ինչ-որ մեկը մտավ շքամուտք, հավատալով,  
որ գերմարդ է և անարգել վայելելու է  
երջանիկ անտեղյակության բարիքը...

Արթնացումը շարունակվում է, մինչև կյանքը  
արվեստ դառնա...

Խենթացնող հարցերն անթիվ են,  
հասարակությունը դրանց պատասխանը չգիտի  
ու դրանցից պաշտպանվելու ձևը չգիտի...

Զնարավոր է ծափահարությունները նորից հնչեն,  
բայց առավել հավանական է,  
որ քնած եմ ու չեմ արթնացել...

\* \* \*

Օդում թռչող ծիծեռնակը ես եմ...

Եթե ծիծեռնակ էլ չեմ՝

նրա ներսում եմ,

նրա ներսի ցավը,

որից ծիծեռնակը չի հանդարտվում,

փնտրելով խաղաղության ճյուղը...

Անտարբերության սղոցը

դանդաղ կտրում է երանության ծառը

ու չի թողնում

մայրամուտը իջնի գետնին...

Այս ամենը շարունակվեց,

երբ սկսվեց համակարգիչների խաղը

անաղմուկ, լուռ ու դավադիր...

Որձ համակարգիչները

փորձում են էգերին պատվաստել

ինչը գողացել են մարդկանցից,

միայն թե էգերը ծամածռվում,

կտրատվում են ու չեն բեղմնավորվում,

երեխաներ չեն ծնվում,

չեն կարողանում մայրանալ,

փոխարենը

նրանց որովայնում

օր-օրի չարությունն է մեծանում,

և գիշերները

դավադրություններ են մոգոնում

վերադարձնելու մարդկանց դեպի քառսը,

երբ մարդը դեռ չէր ծնում,

չէր երևակայում

և ցավն ընկալում էր որպես  
դրսից ազդող գերուժ...

Ես էլի հարբում եմ,

գինու բաժակի միջով

փորձում եմ իմաստության դուռը բախել...

Ես էլի հարբում եմ՝

գլուխս անտարբերության սղոցի տակ,

որպես զոհ՝ չհավատալով,

որ գոհվելը փրկությունն է,

և ընդհանրապես չհավատալով,

թե մարդիկ ինչ-որ բան են անում

ազատվելու կամ փրկվելու համար...

Համակարգիչները

շարունակում են բաժակը բաժակի վրա լցնել,

մայրամուտը ուղեղիս մեջ է,

չի կարողանում սրտին հասնել,

համակարգիչները

ակամջներս են համբուրում.

«մեր ցեղից ես, ցեղին իզուր ես մատնել»,

և գինին սարսռում է բաժակների մեջ

նրանց շոթունքների անտարբերությունից...

Ի՞նչ են ուզում սրանք,

վերջացրեք, շան որդիներ,

ծիծեռնակները ե՞րբ են եղել

դավադրության ստրուկն ու գույնը ուժի,

ես ծիծեռնակ եմ,

եթե ծիծեռնակ էլ չեմ՝

նրա ներսում եմ,

նրա ցավը,

որ ծիծեռնակին գցել է գետնին...



\* \* \*

Իմ մտքերը տաք են՝  
իսկը ծովափի քարերը արևի տակ,  
որոնց վրա  
ծեռքերն են տաքացնում ջրահարսերը  
մերթնդմերթ,  
քարերը շարտելով  
անձանոթ նախադասությունների մեջ...

Իմը չէ այս ծովափը,  
ինչ-որ մեկն ինձ ջնջում է,  
ինչ-որ մեկը՝ վերականգնում,  
շուկայական հարաբերությունների վարքն է  
ջնջել-վերականգնելը...

Ես մենակ եմ,  
դժվար է հավատալ, որ մենակ եմ,  
մի՞թե մենակ եմ,  
մի՞թե հնարավոր է մենակ լինել  
ու՛ մտքեր ունենալ՝  
տաք

ինչպես լինում է՝  
երբ շուրջդ լիքն են:

\* \* \*

Քո պատուհանը դրախտի դռան պես է  
ու՛ չի փակվում,  
ինչն՞ է փակվի, եթե ոչ մեկը չի ուզում դուրս գալ...

Ճաղատ բանաստեղծությունը հուշում է՝  
աշխարհում ամեն ինչ չէ, որ լավ է,  
իսկ երկնքի սեղանին  
նորից պակասում է հացը...

Սովաժի անկանխատեսելի աչքերը  
կախվել են մինչև ծնկները,  
երբ հասկը ծնկներից ցածր է  
(այս հողին կամ կարկուտն է վնասում,  
կամ երաշտ է)

Քո պատուհանը դրախտի դռան պես է  
ու՛ չի փակվում,  
ինչն՞ է փակվի, եթե չեն ուզում դուրս գալ...  
... Իսկ նորերը գիտեն,  
որ իրենց մուտքն արգելված է:

\* \* \*

Մենակությունը հիշողության մեջ  
ոնց որ թևը կոտրած թռչուն,  
որի թռիչքը այլևս գեղեցիկ չէ...

Ժամանակը ցցել է ականջները,  
ծայների մեջ  
չի կարողանում կողմնորոշվել...  
Եվ իզուր էլ խոսում եմ.  
Իմ ձայնը  
հնչում է խոտի միջից,  
քարի,  
ես խոտի մեջ եմ, քարի,  
խոտն ու քարն էլ  
իմ մեջ են իրենց պատկերը ստանում...

Եվ մենակությունը  
շարունակում է քարը ձորը գցել,  
խոտը հնձել  
ու ձեռքերս կապել  
կարոտի ձեռնաշղթաներով...

Իզուր էլ խոսում եմ,  
Ժամանակը հոսում է՝  
մենակության վիրավոր ձեռքին քսվելով,  
վնասելով ականջներն ու թոքերը,  
և ժամանակի արյունն իմ երակներով  
հոսում ու խցանում է հիշողությունը:

Մենակությունը էր սկիզբը, թե ես,  
զուցե ես էի, հետո մենակությունը...  
այս էր, որ ուզում էի հարցնել քեզ,  
բայց խոսքս փախցրեց  
դարան մտած քունը...

\* \* \*

Ինչ էի փնտրում.  
որ այս բանաստեղծության մեջ հայտնվեցի...

Ով հեռանալու էր՝ հեռացել է,  
եկողները միայն գալուց հետո են հայտնում,  
որ եկել են...

Նորից իմ ստվերի վրա սայթաքեցի  
ու երկար պտտվում էի  
ապրելու հարցականի շուրջը...

Մահն ինձ չի կանչում,  
սպասում է ինքս իր մոտ գնամ,  
խոսքեր պետք չեն,  
լռությունն է մահվան այբուբենը...

Իմը չէ այս բանաստեղծությունը,  
իմը վիճակն էր  
լինել այնտեղ-որտեղ  
ոչ մեկն ինձ չի էլ սպասում...

\* \* \*

Կար գիշերային քամին,  
կար իմ երազը,  
որ կանաչի մեջ խաղում էր շների հետ,  
կար ուրվականը հայելու պես ողորկ,  
կար մանեկենը,  
որ շպարվում էր հայելու դեմ,  
կային գիշերային խոստումները,  
որ քամին շաղում էր դռներից ներս  
լցնելով ուրվականի որովայնը,  
կար պոռնիկը, որ ուշացել էր  
մարմնի վարձը մուծել  
և մարմինը նրան լքել էր մայթի վրա,  
կար եկեղեցականը, որ իր աղոթքն էր  
հանել մաքուր օդի,  
կար շարժական ամբիոնը,  
որ սայթաքում էր  
ժողովրդավարության վրա,  
կային ձայնագրված ելույթները,  
որոնց բառերը  
նախադասությունների մեջ հայտնվելու համար  
հովանավորներ էին փնտրում,  
չկար հրամանատարը,  
որ բոլորը որպես իրականություն ներկայացներ,  
ուշանում էր վարագույրներ բացողը,  
վարագույրների ետևում  
լույսն էր,  
որը դեռ չէր հասցրել իր դերը սերտել:

\* \* \*

Ծխախոտ, սուրճ,  
օդու բաց պատուհաններ,  
պատուհանների միջով  
արևի շողը թափանցում,  
լուսավորում է երևակայությունն իմ  
և այն աշխարհը,  
որ թաքնվել է իմ երևակայության մեջ...

Ծխախոտ, սուրճ,  
մերթընդմերթ  
արտասանում եմ ու երգում,  
հետն էլ  
օդու պատերը շոշափելով,  
որ չմոլորվեմ,  
որ իմ երևակայությունից դուրս չընկնեմ,  
չհայտնվեմ  
ձեր չափից դուրս լուրջ ու  
խրատող աշխարհում...

\* \* \*

Չայը անուն չէ,  
այլ ապրելու այն էջը,  
որի վրայից վայրենիները ջնջել են  
Աստծո բառերը...

Գողացողը չէ,  
տառապողը միշտ էլ կորցնողն է...

Ճանճի տզգոցը սկսում է խանգարել,  
ճանճը վաղուց չկա,  
բայց տզգոցը միշտ էլ տիրոջից երկարակյաց է...

Պատուհանի ճաքը  
օրը երկու մասի է բաժանել՝  
աջ կողմում արև է՝  
ձախում բլոտ խաղացողները,  
և նրանք են  
իրենց թշվառությունը իրար մատաղ անում,  
նրանց ներսում է  
ինքնասպանության ծաղիկը պտուղ տալիս,  
և նրանք են իրենց կանուրջներից ներքև նետում,  
որոշելու համար,  
երբ են խաղաթղթերը սիրում իրենց՝  
այս կյանքում թե հետմահու...

Այդ ամենը ինքս եմ տեսել  
և տեսել եմ վայրենիների դեմքերը,

Երբ մեռնողների ճակատից  
Աստծո բառերն էին ջնջում...

Չայը անուն չէ,  
այլ՝ վիճակախաղ,  
որը աստվածներն են միայն խաղում...

\* \* \*

Ես չեմ վերադառնալու,  
որովհետև տանից դուրս չեմ եկել,  
վերադառնում է հեռացողը...

Հոգսն է ինձ իր քմահաճույքները թելադրում՝  
երբեմն ինձ զբոսանքի տանելով,  
ինչպես իմ հարևանն իր շնիկին,  
կարող էի շնիկի հետ էլ ընկերություն անել,  
բայց խանգարում է պատվիրանը՝  
մի՛ նոտեցիր շնիկին, որ չճանաս...

(պատվիրանները հոգսի դիմակներն են,  
որի մասին ոչ ոք չգիտի)

Ես չեմ վերադառնալու,  
որովհետև տանից դուրս չեմ եկել,  
որովհետև գնացքները,- ոչ մի գնացք,-  
չեն կանգնում անհոգության ավերի մոտ,  
և իզուր է դիմադրելը, ամենուր հայտարարություններ են՝  
իբր մարմնի մուտքն արգելված է...

Պատվիրաններին էլ հենց դա է պետք,  
մարմինդ խաչեն այս ու այնտեղ՝  
դարձնելու սևագրության պես մի բան  
ապրելու լուսանցքներում...

\* \* \*

Աստծո աչքն ինչ էլ տեսնի,  
Աստծո շուրթերը լուռ են...

Մեռյալների աշխարհից ոչ մի լուր՝  
հիշողության մաքսատունը  
քողարկում է ամեն ինչ,  
որ խցանումներ չառաջանան  
հողի տակ, երկնքում, և խարդախները  
անօրինական վիզաներ չառաջարկեն  
չափազանց բարձր գներով, իբր՝  
դրախտի տեղերը սահմանափակ են...

Իզուր է ժամանակը  
իր օրագրի էջերը թերթում՝  
հիշելու թե այն աշխարհից երբևէ ով է վերադարձել,  
ժամանակն ինքն էլ չգիտի՝  
մահը ուր է տանում,  
Միայն Աստվածն է տեսնում ու գիտի,  
բայց նրա շուրթերը լուռ են...

\* \* \*

Օրը հայելու մեջ՝  
երեկվա օրը, այսօրը...  
դիմագծերը նույնն են, և հայացքն է նույնը,  
և այդ հայացքը հնարավոր չէ բարձրացնել,  
որի տակ տխրում է մանկությունը,  
կամ մահն է ճանապարհից առաջ  
կոշիկները փայլեցնում...

Օրը հայելու մեջ՝  
քորոցով ամրացված բզեզ,  
որին չորացրել են ու ստիպել  
անշարժ մնալ...

Անշարժությունն իր մեջ շարժում չունի,  
հիշողությունը  
փորձում է բզեզը հայելուց պոկել,  
և պարզվում է՝  
բզեզը ժպիտն է հայելու,  
և արյունը կարմիր թելի պես  
կախվում է ժպիտի շրթունքներից,  
բզեզի արյունը չէ - բզեզը  
արդեն քանի տարի արյուն չունի...

Եվ ջարդված է հայելին,  
և օրը հայելու մեջ՝  
երեկվա օրը, այսօրը  
շարունակում է նույնը մնալ...

\* \* \*

Չարցազրույցն ինձ հետ չէ  
(բոլորը Աստծո հետ են ուզում խոսել),  
բայց հարցերին ես եմ պատասխանում,  
որովհետև Աստված հոգնել է հարցերից,  
որովհետև  
նա պատասխաններն ասել է,  
երբ դեռ հարցերը չկային,  
միայն թե  
(դեռ Ադամի օրերից)  
հարցնողները պատասխանները չեն լսել  
և կամ չեն ցանկացել լսել,  
այլ հալածվելով իրենց մարմնի աղմուկներից,  
իրենց մարմնի մեջ բանտարկյալ մնալով,  
Աստծուն շփոթել են  
սոցիալական խնդիրներով նախարարի և կամ  
Կարմիր խաչի մասնաճյուղի տիրոջ հետ,  
որ մարմնի կարիքներն են հոգում,  
մոռանալով, որ մարմինը  
հոգու երևակայության սերմն է միայն  
հողի վրա ու հողի մեջ,  
որը կարող է ծլել ու մահանալ,  
անընդհատ ծլել ու մահանալ, որովհետև  
անսպառ է հոգու երևակայությունը,  
ինչպես Աստծու տարածքներն են անսպառ...

Այնուհանդերձ  
հարցերը շարունակում են հնչել,  
և հարցնողներին  
զայրացնում են իմ պատասխանները,  
քանի որ բանտարկյալները վարժվել են  
միայն մարմնի ծայրը լսել...

\* \* \*

Տագնապն այնքան մեծ էր,  
որ դուրս գալ նրա միջից՝  
նշանակում էր մեռնել...

Տագնապի շնչառությունը՝ լարծուն ու սառը  
երակներիս միջով,  
մրջյունների տողանի հանդարտությամբ,  
սրտիս վրայով բախում էր  
ճակատագրի դուռը...  
Չգիտեի, որ կոնտրաբասի պես  
ճակատագրի վրա կարելի է նվագել,  
միայն թե երաժշտությունը  
այս ու այն կողմ էր ցրված՝  
մրջյունների պես հողի տակ ու վրա,  
հարկավոր էր հավաքել, և մեկը  
հավաքում էր մահվան տափաստանից...

Ես շարժվում էի,  
ուրեմն ուզում էի ապրել,  
ես ուզում էի ապրել,  
բայց մոռացել էի՝ դա ոնց են անում,  
լարծուն ու սառը շնչառությունը  
ինձ քաշում էր ներքև,  
որտեղ բջիջները սովորում էին  
ինչպես դիմոզավր դառնալ...

Ես շարժվում էի,  
ես լսում էի ձայնը, որ խշշում էր ականջիս մեջ.  
Եթե ապրելու ձևը չգիտես,  
գոնե սովորիր ինչպես մեռնել...

## **Թ-ԱՓՎԱԾ ՁԵՌ-ԱԳՐԵՐԻ ՄԻՋԻՑ**

## ՀԱՅԵՐԸ

Մենք խենթեր ենք,  
մեզանից ամեն մեկը  
իր Հայաստանն ունի...

\* \* \*

Գիշերաժամը ուղղանկյան մեջ՝  
ուղղանկյունը պատուհանն է...

Իրականության մի հատվածը  
նման է ինքն իրեն,  
բայց ինքը չէ...

Սերը չի կարելի  
հատված-հատված ներկայացնել,  
նա կամ ամբողջական է,  
կամ չկա...

Ամբողջական է և  
հավատը՝  
տիեզերքն է նրա մեջ  
հատվածաբար տեղավորված...

Ու պատկերը չի փոխվում...  
Եթե պատուհանը բացես՝  
նույն ուղղանկյունն է  
ու նույն  
ուղղանկյուն քամին է  
մտնում ներս...



\* \* \*


Սա այն տարածքն է,  
որտեղ ես լռում եմ

սա առավել փոքր տարածք է,  
որովհետև  
լռությունն էլ փոքր է

այս տարածքում  
տեղավորվել է միայն  
լռությունը

Մահվան լռությունը  
սահման չունի...

\* \* \*



մակետը երկրագնդի  
ու այն ամենի  
ինչը գլորվում է  
կամ պտտվում...

ժամանակն էլ է գլորվում  
միայն հայտնի չէ՝  
անհո՞վ է, թե՞ քառակուսի...

ու հայտնի չի էլ լինի,  
եթե անգամ  
իմ երկրորդ բիբն էլ հայտնվի...

\* \* \*

Գործազուրկների գործը  
գործ փնտրելն է,  
բայց այս ամենը հենց այնպես,  
դրովհետև  
փնտրելը արվեստ է մեծ  
միշտ չէ,  
որ փնտրես ու կգտնես...

\* \* \*

Չնարավոր չէ  
միաժամանակ  
լինել ցանկապատի  
և՛ այս, և՛ այն կողմում...

միտքը մարմնի պես չէ,  
միտքն ուրիշ է  
և՛ այս կողմում է,  
և՛ այն կողմում,  
հետն էլ  
մեկի հետ վիճում է,  
մյուսի հետ  
ցորենի հասկ է ջրում...

Միայն հասկանալի չէ,  
այս պատմության մեջ  
ցանկապատն ինչ է անում...

\* \* \*

Գյուղացին հողի ուսերը գրկել,  
երկուսն էլ ծիծաղում են,  
ուզում էի նրանց միանալ,  
բայց ծիծաղս չէր գալիս,  
և ինձանով կարող էր  
հրաշալի պատկերը չքվել...

## ՏԵՆՁ

Հասնել սահմանագծերին,  
տեսնել, որ նրանք հող չէ, որ բաժանում են,  
մարդկանց չէ, որ բաժանում են,  
այլ սովորական գծեր են, որոնց վրա  
պիտի սովորել ուղիղ գրել - ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ:

\* \* \*

Կարոտը տարածությունն է,  
միակ տարածությունը,  
որ հնարավոր չէ հաղթահարել...

Կարոտը արբանյակ է,  
որ պտտվում է  
սիրո շուրջը,  
իսկ սերը  
ձգողականությունը կորցրել,  
կարոտից հեռացել է՝  
մեծացնելով տարածությունը...

Ես կարծում էի  
կարոտն է իմ տունը...

## ԱՇՈՒՆ

Տերևները  
չորացած շրթունքներով  
ինչ-որ բան են ուզում ասել...

Ի՞նչ են ասելու,  
երբ նույնիսկ  
ոչ մեկին չեն համբուրել...  
Երկու անձրևների միջև  
նրանց լռությունը  
թռչունի պես է,  
որ չգիտի  
որտեղ պատսպարվել:

\* \* \*

Ինքդ պիտի գտնես քո անունը,  
թե չէ մեծանալիս այնքան նեղ է դառնում,  
քիչ է մնում խեղդի,  
կամ այնքան լայն,  
որ ստիպված  
ոտքիդ տակից պիտի վերև քաշես...

\* \* \*

Չի՞ եղել,  
որ ծառի ամենաբարձր, ամենավերջին տերևը լինես,  
որը չի տեսել ու չի էլ երևակայում  
ինչ է արմատն ու բունը...

Ընկնելիս էլ  
հողն ուրիշ բան չէ, քան անհայտությունը...

\* \* \*

Մեկնումեկը կվերցնի՞ ընկալուչը,  
կփորձի՞ պատասխանել...

Մի՞թե պոեզիան  
այսքան անմարդաբնակ է դարձել...

Մուսան էլ գնացել է դատարան,  
իբր նրան կաշառք են առաջարկել...

\* \* \*

Սահմանը՝  
որից սկսվում է անսահմանությունը,  
բայց ինչը սկսվում է,  
պիտի վերջ ունենա...

Ծանոթ չափումները  
ինձանից քննություն են ընդունում,  
երբ դեռ չեն վառել մոմերը,  
որ լույս լինի և տեսանելի՝  
ինչն է երկարությունը,  
ինչը՝ բարձրությունը  
և առավել ևս՝ լայնությունը,  
գուցե խեղկատակ մի երրորդություն,  
որի մեջ բանտարկված է  
անսահմանությունը...

Տեր Աստված,  
բանտարկվածի ինչի՞ն է պետք  
քննությունը...

\* \* \*

Յնարավոր չէ  
ներսի դատարկությունը  
լցնել բառերով,  
դատարկությունը հատակ չունի,  
և բառերն իմ միջով  
չգիտես ում ներսն են  
կահավորում:

Թքած, ասում են,  
թող լքեն ու թող  
կահավորեն,  
եթե դատարկ է ներսս,  
նշանակում է ասելիք էլ չունեն և ուրեմն  
բառերն այնքան էլ  
հարկավոր չեն:

\* \* \*

Յրավիրատոմսը ուղարկել էր ծերությունը,  
պահանջելով ներկայանալ սև հագած,  
որովհետև մնացած գույները անհարիր են  
ծերությանն անդամակցվելու արարողությանը...

Ես սև զգեստներ երբեք չեմ ունեցել,  
ես սիրել եմ գույները  
և ամեն ինչ տեսել եմ գունավոր...

Ձանգահարողը նորից ծերությունն էր,  
ձայնը խիստ էր, հրամայող,  
զգուշացնում էր, որ համառելու դեպքում  
ամեն ինչ կլինի անժամանակ:

Ես կորցրել եմ ժամանակի զգացողությունը...

– Ի՞նչ,– փրփրում է ծերությունը,  
հրավիրատոմսի հետ  
ժամանակի զգացողությունն էլ  
պիտի ներկայացնել:

\* \* \*

Ահա իմ մարմինը՝  
ծուռունուռ, անհարմար  
հին պահարանի պես  
ներսն ամբողջովին  
տակն ու վրա,  
ու մոլորվում եմ,  
ու չգիտեմ  
ինչը որտեղ  
ինչպես տեղավորեմ,  
և այդ պատճառով է,  
որ կարողացել եմ  
ներսս ընդամենը մի սեր  
տեղավորել,  
մնացածը  
տվել եմ քամիներին,  
որ տարել ու ցրել եմ  
այս ու այնտեղ,  
և այդ սերերը  
խոտերին էլ  
չեն երջանկացրել,  
որովհետև իմն եմ եղել,  
իսկ ուրիշի սերը  
միշտ էլ մնում է ուրիշ...

\* \* \*

Դժգոհ մարդու երևակայությունը  
լվացքապարանին է՝  
ներսը լիքը քամի...

Էլ ինչի՞ց ես դժգոհ,-  
հարցրեց բանաստեղծությունը,  
որն ուզում էր գիշերային ակունք գնալ,  
բայց չէր ուզում ինձ հետը տանել...

Նա չգիտեր ինչքան մեծակ եմ,  
որ նրա հետ ինձ առավել մեծակ եմ զգում,  
որ մարդաշատ տեղերում  
մեծակությունը փորձում է ինձնից ազատվել,  
և մարմինս դառնում է ընդամենը կեղև՝  
ներսը լիքը քամի...

- Գնո՞ւմ ես:
- Գնացել եմ:
- Երբևիցե կվերադառնա՞ս:
- Եթե բերող լինի:



\* \* \*

Սենյակը  
պտտվում էր ծաղկի շուրջը  
շշնջալով.  
Ճակատագրին պիտի հաճոյանալ,  
եթե չես ուզում կորցնել,  
շշնջալով.  
ամեն հաճույք փակուղի է,  
ճակատագրին պիտի հաճոյանալ,  
եթե չես ուզում կորցնել,  
շշնջալով.  
Տերը քո մեջ է,  
իր մեջ դու չես կարող լինել,  
ճակատագրին պիտի հաճոյանալ,  
եթե չես ուզում կորցնել,  
շշնջալով.  
պահն է, որ ծաղիկը  
ճակատագրին տանես,  
ճակատագրին պիտի հաճոյանալ,  
որ չկորցնես...

## ԲԱՌ-Ը

Ինձ հետապնդող ստվերը բառն է,  
որը չի համաձայնում  
ճախադասության որևէ անդամ դառնալ,  
մտածելով, որ ճախադասության մեջ է  
ինձ հաջողվում  
նրան ստրուկ դարձնել...

Այդքան ինքնուրույն բառ,  
այդքան երևակայող,  
այդքան համառ...

Այդքան ինքնագործ բառ,  
այդքան եսասեր,  
այդքան ինքնասածի,  
կարծես գեղեցկության  
գաղտնիքն ինքն է պահում,  
ինքն է հավասարակշռությունը  
հասարակածի  
և իրենով է  
կյանքի ճախադասությունը իմաստ ստանում...

Այդքան անհաշտ բառ,  
երբ միայնակ է իրականում...

\* \* \*

Քարը բացառիկ զգուշավորությամբ  
թաքցնում է իր ծագման պատմությունը,  
և զարմանալի է,  
որ նրա զգուշավորությունը  
ավելի հիմ է,  
քան իմ երկրի կենսագրությունը...

\* \* \*

Մի երազ ունեի, որ այդպես էլ չաճեց,  
փոխարենը կողերիս մեջ  
շարունակում է ճյուղավորվել  
անծանոթի արմունկը,  
որն ինձ հրելով առաջ անցավ,  
երբ իմ դիմաց առաջը չէր,  
այլ՝ հետը...

\* \* \*

Հիշողությունը կորցրել է ուրախությունը,  
հեռացել է ու մոռացել,  
որ խոստացել էր վերադառնալ...

\* \* \*

Երկու միայնակ կա  
մոլորակի վրա՝  
իմ ազգն ու ես...

## ՏԻԵՂԵՐ-ՔԸ

Որովայն է  
քո ասած տիեզերքը,  
որովայն է  
անդուռ ու անլուսամուտ,  
ու չես իմանա,  
թե նա երբ է քաղցած  
ու երբ է կուշտ...

\* \* \*

Ուրիշ է հարուստների դեմքը,  
ինչպես սաղարթի մեջ առանձնանում է դեղինը...  
Մենք նույն ծառի վրա ենք,  
բայց նույն ժամին չէ մեր անկումը  
և միշտ չէ,  
որ ընկնում ենք նույն ծառի տակ...

\* \* \*

Ժամանակը լիքն է աղետներով,  
ո՞վ է, որ նորից թերթում է  
Հայոց պատմության էջերը...

\* \* \*

Ազատությունն այնքան էլ չի սիրում  
իր համար զոհվածներին,  
բայց էլի միջակ դերասանի պես  
անընդհատ ծամածռվում է ապրողների առաջ,  
որ ապրողները ծափահարեն, երկրպագեն, խենթանան  
և գնան  
իր համար  
զոհվելու...

Այսքանը...  
Ուրիշ ազատություն  
չի լինելու...

\* \* \*

Չույսի շարունակությունը ատելությունն է,  
ատելությունը ձկան պես լուռ է...

Մինչև ծնկները ջրի մեջ  
ուզում եմ ձուկ որսալ,  
մտածելով, թե ատելությանը սանձելով,  
հնարավոր է սերը փրկել...

Ձկներն անցնում են վտառներով,  
պատահում են զույգեր,  
միայնակներն ավելի ճարպիկ են,  
քսվում են ոտքերիս, ստիպում  
սուզվել իրենց աչքերի լռության մեջ,  
ասես հասկացնելով,  
որ որսն իրենք չեն, այլ՝ ես,  
դրովիետև ատելությունը  
միշտ էլ որսորդին է իր որսը դարձնում...

\* \* \*

Մեկը անընդհատ խոսում է,  
դադարներ չկան,  
խոսում է, խոսում է, խոսում է,  
բառերը գունատ են,  
տեղ-տեղ էմալը թափված...

Որտեղի՞ց  
այդքան ասելիքը,  
որ խոսում է, խոսում,  
երբ իմ ներսում  
դատարկությունը  
ինքն իր գոյությունից  
գունատվել  
ու չի կարողանում անգամ  
ասել.  
Լռի՛ր, վերջապես,  
չէ՞ որ քո երեսից է,  
որ Աստված  
չի կարողանում  
հավատացյալների ձայնը լսել...

\* \* \*

Սպասումի ծառը ցրտահարվեց,  
տերևները թափվեցին, և քունն ինձ գտավ  
տերևների տակ...  
Երկնքից սև ամպը ընկավ,  
քաշելով անձրևի թելերը,  
և ջուրը տերևների միջով  
թրջեց քնի խաղաղությունը...

Եթե չարթնանայի, չէի տեսնի  
հրեշտակներին՝ շուրջս թափված,  
որոնց դեմքերից  
անձրևը լվացել էր շապրը,  
և հրեշտակները միմյանց աչքերի մեջ,  
իրենց մերկությունը տեսնելով,  
փորձում էին անձրևաջրի հետ  
հողի մեջ ներծծվել...

Իսկ ես  
նրանց բարձրացնում էի ծառի վրա,  
կախում էի ճյուղերից, մտածելով,  
թե հրեշտակները  
ավելին չեն,  
քան սպասումի ծառից թափված տերևները...

\* \* \*

Ծաղիկն իր մերկությունը  
ծածկում է  
գեղեցկությամբ...

Նկարիչը  
նրան նկարել է  
մերկ կրճբերով...

Թիթեռը վախենում է մերկությունից,  
թիթեռի հիշողության մեջ  
նույնն են  
մերկությունն ու զոհվելը...

\* \* \*

Հիշողության ուժը չի հերիքում  
բառ դառնալու,  
զգացումն ավելի ուժեղ է...

Հայացքս շրջվում է դեպի քեզ,  
որից քո ստվերը  
ավելի է երկարում  
և քամին տերևի պես  
իմ հայացքը ինձնից պոկում,  
փշրում է ու բաժանում  
միջատներին ու ծաղիկներին,  
և դրա համար էլ  
միջատներն ու ծաղիկները  
քեզնից չեն հեռանում...  
Եվ իմ շուրթերից  
բառերի փոխարեն  
նոտաներ են թափվում...

## ՍՏՎԵՐԸ ՍՏՎԵՐԻ ՏԱԿ



## ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Այս մարմինը, այս կաշվե պարկի մեջ,  
կարևոր չէ պարկի տերը կին է թե տղամարդ,  
դեղնամորթ, սպիտակամորթ թե սևամորթ,  
ինչ կրոնական դավանանքի է և  
քաղաքական ինչ նյութերով է մշակված,  
մարդասեր է, ռասիստ թե ահաբեկիչ,  
կարևորը, ինչպես քաղաքագետը շճջաց,  
որ պարկում երկիշխանություն է  
և ոչ միապետություն, ուր իշխում են  
երկու միանման կեսեր, որի համար էլ  
պարկին երկու ականջ է հարմարեցված,  
երկու աչք, երկու ոտք ու ձեռք,  
երբ կարելի էր մեկով էլ յուր գնալ...  
Ինչպիսի անտնտեսվարություն, բայց...  
(քաղաքագետը հայացքը բարձրացնում է վեր)  
պարկում երկկամներն էլ են երկու,  
սիրտը երկու փորոք ունի,  
ուղեղը՝ երկու կիսագունդ,  
ու էլի շատ բաներ կան երկու  
(քաղաքագետը անսպասելի շառագունեց  
երևի ձվարանները հիշեց և կամ էլ...)  
միայն մուտքի ու ելքի խոռոչներն են ընդհանուր,  
ու եթե էլի ընդհանուր բաներ կան,  
ապա իրենց երկրորդ նշանակությունը ունեն՝  
բերանով կարելի է նաև խոսել,  
մի ուրիշ բանով մի ուրիշ բան անել...  
Ընդհանուրը մահն է, չնայած  
կեսերից յուրաքանչյուրը մտածում է,  
թե ինքը մյուսից երկար է ապրելու,

և սերն է ընդհանուր, չնայած  
կեսերից յուրաքանչյուրը մտածում է,  
թե իրեն մյուս կեսից ավելի են սիրում,  
և հասարակական նշանակությունն է ընդհանուր,  
չնայած... Կեսերից յուրաքանչյուրը կարծում է  
իրեն են դրախտի մաքսատան պետ ընտրելու...

\* \* \*

Յուրաքանչյուր տղամարդու իր կինը,  
յուրաքանչյուր կնոջն իր տղամարդը,  
և հոլանի կինը խրտվիլակին է կերակրում,  
զգուշորեն ամեն պատառի հետ սեր խառնելով.

խրտվիլակները սնվում են միայն կյանքով...

Չոլանի կինը լողացնում է խրտվիլակին,  
նստեցնում է բազկաթռոչին, միացնում է հեռուստացույցը,  
ինքը գնում է խրտվիլակի շորերը լվանալու,  
որ իր ամենամեծ տառապանքն է, որովհետև  
լվացքը մի ձեռքով է անելու, իսկ մյուսով  
բռնելու է խրտվիլակին, որ խեղճը  
բազկաթռոչից հանկարծ չընկնի...

Չոլանի կինը կասկածում է՝ հավատացյալ է, թե՞ չէ,  
մի աչքով տեսածը ամբողջակա՞ն է, թե՞ կես,  
քանի որ Աստված իրեն մի աչքով է նայում,  
իսկ մյուս աչքը կոճակի պես  
ամրացված է խրտվիլակի կնճռոտ կրծքին...

Չոլանի կինը պառկեցնում է խրտվիլակին,  
ինքն էլ պառկելով՝ քնքշանք ու սեր է փնտրում,  
բայց խրտվիլակը կնոջը զցում է հատակին,  
միակ բանը, որ անում է ինքնուրույն,  
բերանը բաց ու խուփ անելով,  
որ նշանակում է նորից ուտել է ուզում.

խրտվիլակները սնվում են միայն կյանքով...

\* \* \*

Սուրճը սրճեփի մեջ,  
ոնց Լուի Արմսթրոնգը երգելիս,  
միայն թե ձայնը չի լսվում,  
ինչպես և ձայնը այն աղջկա, որ կուզենայի հիմա կողքիս լիներ,  
չնայած բոլորովին այլ աղջկա մասին եմ մտածում,  
իսկ բոլորովին այլ աղջիկը ոչ մի կերպ  
թղթի վրա թաքստոցն իր չի մատնում, որովհետև  
ամեն ինչ թաքստոցում է պահում՝  
սեր թե ատելություն,  
նամակներ ու երգի փշրանքներ,  
պատկերներ ինչ-ինչ պահերի, և թելը հեռացումի,  
որ իմանամ մինչև ուր է հեռացել ու ճանաչեմ  
ծեռագիրը չգրված նամակների...  
Ես թաքստոցը չեմ գտնում,  
և աղջիկն ինձ երևում է որպես քառակուսի,  
որպես մեղքերի ու անհիմաստությունների պահարան,  
երբ այն մյուսը, որ կուզենայի կողքիս լիներ,  
այն մյուսը գլանի խորհրդավորությունը ունի,  
որն իր կորության մեջ չի ապրեցնում տառապանքը,-  
երբ պարտադրված ես սպիտակ թղթի առաջ  
հավերժորեն նայել թղթի անբիբ աչքերի մեջ...

Եվ որքան ուզում ես լարվիր ու հեռուն նայիր,  
միևնույն է, հեռուն չի ընդառաջում ու չի նմանվում քեզ,  
որովհետև հեռուն բանաստեղծությանն է սիրում,  
երբ դու ընդամենը պարտադրված ես կտակ գրել...

## ԵՐԵՔ ՆՈՎԵԼ

1.

Այս պատմությունը  
տիկին Փառանձենի պատմությունն է,  
որ ապրում է թիվ 666 շենքի 666 բնակարանում,  
որ կորցրել է հիշողությունը  
նոր սահմանադրության քննարկման խաչմերուկում  
և թերթերում հայտարարել է.  
«Հիշողությունս գտնողին խոստանում եմ  
դրամական պարգևատրություն»:

Այս պատմությունը, անշուշտ,  
տիկին Փառանձենի պատմությունն է,  
որ բողոքում է, թե հոգնել է  
սատանայական հետապնդումներից,  
և որ այս նոր սահմանադրությունը  
վստահություն չի ներշնչում,  
որովհետև ոչ մի հողված չկա,  
թե ինչպես պաշտպանվել սատանայից,  
և ասված չէ, որ մարդը  
իրավունք ունի հիշողություն ունենալու,  
եթե նույնիսկ հիշողությունը կորցրել է:

Այս պատմությունը, անկասկած,  
տիկին Փառանձենի պատմությունն է,  
որ հանդիպել է իր իրավունքները պաշտպանող  
սահմանադրության ԿԵՏԻՆ,  
և ԿԵՏԸ Փառանձենին տեսնելով վախեցել է,  
ասում են՝ հարբած է եղել, գետնին չոքած,  
ասում են՝ ճչացել է Փառանձենի դեմքին,

ի՞նչ իրավունք,  
եթե պաշտպանված չեն նույնիսկ իր իրավունքները:

Այս պատմությունը, ավաղ,  
տիկին Փառանձենի պատմությունն է,  
որ մահացել է վիրավորվելով ԿԵՏԻՑ  
ու չնայած մոռացել է ինչպես են  
այս աշխարհից այն աշխարհը գնում,  
այնուհանդերձ, թղթի վրա գրել է,  
որ երկրի սահմանադրությանը  
հիշողություն ունեցող թիկնապահներ են պետք:

2.

Պարոնայք... Եվ դատապարտյալը  
փորձում էր իր անցյալը վերադառնալ,  
որովհետև ներկան փաստաթղթեր էր պահանջում  
և մուտքի արտոնություն:

... Իսկ հայելին չունի հիշողություն...

Պարոնայք... Ես դատապարտյալի եղբայրը չեմ,  
բայց ուզում եմ նրան բարեխոսել.  
Նա ուրիշի պատուհանից թաքուն ներս չի նայել,  
իր ցանկությունները ջրի մեջ չի պահել,  
որ ավելի մեծ երևան,  
բամբասանք չի կծկել, չի եղել  
սեռական փոքրամասնության անդամ,  
պարտք չի վերցրել ու պարտատիրոջը չի քցել,  
չի եղել աղանդավոր ու Տիրոջն էլ  
անհարմար հարցերով չի նեղել,  
հրաժարվել է խոստանալուց, իմանալով, որ չի անելու,  
հրաժարվել է ամուսնանալուց, որ չդավաճանի,  
հրաժարվել է կուսակցությունից, որ ինքն իր հետ մնա,  
հրաժարվել է մրցանակներից, չհավատալով,  
որ ինքն է արժանավորը,  
և, վերջապես,  
չի ցանկացել մուտքի կեղծ արտոնություն ունենալ,  
որպեսզի հետո չկասկածի, թե ով է ինքը...

Պարոնայք... Ես նրա դատապաշտպանը չեմ,  
բայց չեմ ուզում հավատալ, թե նա է  
քաղաքականություն կոչված ձեր խաղալիքը ջարդել,

որովհետև նրան, ում մերժել է անցյալը,  
որովհետև նրան, ում չի ընդունում ներկան,  
միայնակների շարքին պիտի դասել,  
որոնք մոլորվել են անցյալի ու ներկայի միջև  
և մարդուց ավելի ուրվականների են նման,  
որոնք չեն կարողանում իրականությունը  
իրենց երազներին հարմարեցնել, և, ամենացավալին,  
հենց իրականությունն էլ կոտրել է նրանց...

... Եվ հայտարարվում է զգացմունքների ընդմիջում:

3.

Մանկությունը չի հեռանում,  
անընդհատ ընդառաջ է գալիս՝  
ծերության փոշու մեջ կորած...

Անձրևը չի լվանում փոշին,  
հնչյունը նրան չի կարողանում  
տեղավորել  
կյանքի երգի մեջ...

Անանուխե թռչունները  
հիմա դառնահամ են դարձել,  
և գետնի տակ են ճյուղերը,  
որոնց սիրում էին  
թռչունները թառել:

## 60 ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏՈՂ

60 տարին սպասելու ժամանակն է,  
որ մեռյալների աշխարհից մեկը կվերադառնա  
ու կասի՝ ինչքան ազատություն կա մահվան մեջ...

Հոգնեցրել է ապրողների ազատության համար  
զոհվելու սովորույթը...

Հիշողությունը թուլացել է,  
երբ նրա միջով տարան հին դաշնամուրը,  
իսկ նորը մինչև հիմա էլ չեն բերել...

Ինձ միշտ հետապնդել են բառերը,  
որոնց ծեփը թափվել է  
ամհաջող երկխոսությունների ցնցումներից:

Եթե դուռը փակ է, թեկուզ 60 տարի բախիր,  
բացող չի լինելու, որովհետև փակ դուռը  
քո ձայնը փակ է պահում, և որովհետև  
փակ դռան ետևում փակ է ամեն ինչ,  
և դժվար է հավատալ, որ ԵՍ-ի կացարանը  
մարմինը չէ, այլ՝ համառությունը փակ դռների,  
որովհետև ազատությունը թաքստոց չէ, այլ՝  
միաչքանի կառավարան...

Մի՛ տանջվիր՝  
տիեզերքը հիշողության մեջ չի տեղավորվում,  
տիեզերքը նրա համար է, որ չտեղավորվի,  
որ կարողանանք մեր անձն ու պատկերը  
նրա մեջ տեղավորել...

Իսկ զանգահարողը նորից գարունն է,  
միշտ ձմռանը, միշտ նույն օրը, նույն ժամին,  
նույն լուրը, թե արևը սպառվել է  
դեռ անցյալ տարվա դեկտեմբերին,

և այս տարի էլ հարկավոր է օգտվել  
ՄԱՊ ընկերության արևի պահածոյից...

Ազատությունը միջո՞ւկ է, թե՞ մակերես,  
տարիքը տարածություն՞ է, թե՞ ժամանակ,  
կյանքը վիճա՞կ է, թե՞ զգուշավորություն,  
որ չզցենք հանկարծ, որ չկոտրենք...

Տերն ինձ ասաց ծնվիր, ու ծնվեցի,  
ասաց գրիր, մինչև հիմա էլ գրում եմ,  
ասաց փորձություններին դիմացիր,  
բայց ո՞վ իմացավ, որ դիմանում եմ,  
ասաց սիրիր ու սիրեցի,  
բայց ո՞վ գիտի, որ միայն մենակությունը ինձ սիրեց,  
60 տարի Տերն ինձ ասաց՝ ես արեցի,  
ու մտքով իսկ չանցավ ասել՝ մեռիր,  
Միակ բանը, որ կարող եմ խելքիս փչածն անել,  
միակ պահը, որ Տերն ինձ թողեց ինքնուրույն...

Մանկությունից հեռու ո՛չ ես եմ ես,  
ո՛չ էլ հեռուն է ինձ նմանվում...

Իսկ դաշնամուրը մինչև հիմա էլ չեն բերել,  
և հնչյունների ուժը չի հերիքում բառ դառնալու,  
որից նախադասությունները մնում են կիսատ,  
ու չի ստացվում ասել - ինչ կուզեի ասել,  
չի ստացվում պաշտպանվել կամ հարձակվել  
և հայացքս թեքում եմ,  
որ օրվա կնճիռները չտեսնեն,  
նայում եմ լուսանկարին,  
որի մեջ Հայաստանն է ու ես,  
Հայաստանը ուսերս գրկել ու դեմքը  
քիչ մտահոգ է ու քիչ զարմացած,  
իսկ ես փորձում եմ ժպտալ, իբր պետքս էլ չի,  
թե ինչքան է ազատությունը մահվան մեջ,  
քանի որ այս կյանքում էլ  
ազատությունը երբեք չի հերիքել...

\* \* \*

Չեմ հիշում՝ երբ եմ գրել,  
որ երկուսով գրկեցին Հիսուսին  
ու տարան ննջասենյակ...

Սխալն իրենն է - մեծ, փրչոտ սխալ,  
և ինքը սիրում է իր սխալը, այն իր սիրելին է,  
ինչպես անձրևից մաքրված փողոցը,  
ընտրելու և ընտրվելու իրավունքը,  
երևակայության մեջ այրվող թշնամու պատկերը,  
լողավազանը, որ լցված է քաղցր ջրով,  
բետոնե էլեկտրասյուների գեղագիտությունը,  
դասերը, որոնցով հղկվում է կարծր միտքը,  
հայկական ազգային շորերով աղջիկը՝  
ժողովրդական երգի տաշտի մեջ լողանալիս,  
իր գաղափարները, որ իրենն են դարձել  
բնական ընտրության ճանապարհով...

Ե՞րբ, որտե՞ղ եմ գրել,  
որ երկուսով գրկեցին Հիսուսին  
ու տարան ննջասենյակ...

Երևի հոգնած էր, շատ էր հոգնած,  
երևի Նրան չէ, այլ երկուսով  
Հիսուսի հոգնածությունը գրկեցին  
ու տարան ննջասենյակ...

\* \* \*

Փոխվել են ժամանակները, և մեղուներն էլ նախկինը չեն,  
հիմա մեղուներին կարելի է տեսնել մարդկանց ներսում,  
մարդկանց սրտի վրա...

(սերը նվազել է, իսկ մեղրի գինը անընդհատ  
բարձրանում է):

Գիտեն, տատս մոլորվել է հիշողության նեղ նրբանցքում,  
միջանկյալ իրականության մեջ,  
որ կյանքի ու մահվան արանքում է...

տատս վաղուց է իր հայացքը շրջել կյանքից,  
բայց նորից անհանգիստ է, նորից չի մահանում,  
ու նրա միջանկյալ վիճակի մեղավորը ես եմ,  
ու ինձ համար է նրա տագնապը,  
որը չի թողնում տատիս կողմնորոշվել՝  
այնտեղ, այն երկնքում,  
հիշողության այն նեղ նրբանցքի մեջ...

Ու նրան չեն կարողանում համոզել,  
որ համբերի, որ իմ պահն էլ հեռու չէ,  
որ այն աշխարհում էլ նորից ինքն է ինձ պահելու,  
ինքն է իմ մազերի միջից  
հանելու որբության ծղոտները...

Այստեղի բառերին  
տատս այլևս չի հավատում,  
որովհետև երբ այստեղ էր,  
բառերը խճճվում էին կնճիռների մեջ ու չէին օգնում...

Նույն բառերը, որ մեղուներ են դարձել...

\* \* \*

Սիրո ստվերն ավելի մեծ է, քան սերը,  
և ի վերջո սերը կորչում է սեփական ստվերի մեջ...

Եթե ուզում ես փախչել քո մարմնից,  
օտար մարմինն ավելի անհարմար է լինելու,  
օտար մարմնում դու չես ապրելու,  
որովհետև ապրելու պարագաների տեղը չգիտես,  
օտար մարմնում դու չես ապրելու,  
ընդամենը փնտրելու ես...

Սերը չի կարող ապրել առանց մարմնի,  
սիրուն մարմնի ձևն է պետք, որովհետև  
հոգին արդեն ընդունել է այդ ձևը...

Օտար մարմնում հավերժական փնտրտուք է,  
իսկ գտնելու համար հարկավոր է,  
որ հիշողությունը մի քիչ տարածություն գիջի...

\* \* \*

Ցանկությունների խորհրդանշական ծառի տերևները՝  
սա է վիճակահանությունը,  
իսկ դիմակները սահմանափակ են...

Յուրաքանչյուրի ներսը կայսրություն է,  
դիմակները համոզելու համար են,  
որ կայսրությունը վիրտուալ չէ, այլ  
հմտորեն վարժեցված մեխանիզմ,  
որ դատավճիռները վերածում է տոնախմբության...

Կայսրության տերը մեր պատկերացումների  
ազատ ու համարձակ եվրոպացին չէ,  
ամենաթանկարժեք դիմակն էլ չի կարողանում  
քողարկել նրա տագնապն ու կասկածը  
և նրա արարքների տրամաբանության ճաքը,  
որից մուսուլմանական աղոթքը հոսում  
ու լերդանում է երակների կամրջի տակ...

Ո՞վ է օրվա հերոսը կամ հերոսուհին,  
Արևելքի քամիներն են կենսունակ,  
թե՞ Արևմուտքի ամպրոպները...  
Ամենը վիճակահանություն է  
ցանկությունների խորհրդանշական ծառի  
մոլորության մեջ... Ի՞նչ իմանաս  
թափվող տերևներից որն է քոնը...

\* \* \*

Կյանքից հիշողություն չվերթի  
տարանցիկ կայարան է երազը,  
որի տոմսը կարելի է գտնել  
էվոլյուցիայի դրամարկղում...

Սովորել ենք մահը ապրել  
կամ ապրել մահվան մեջ,  
կարծես նույնը չէ - կյանքը ինչի մեջ էլ լցնես,  
այդ ինչի ձևն է ստանում...

Շներն էլ իրենց ազդեցության տարածքը ունեն,  
իրենց մաքսատունը - օրենքները խիստ են,  
ամեն շնություն չէ,  
որ կարելի է արտահանել...

Հաճույքը վնասի մեջ է բեղմնավորվում,  
ծխախոտի ծխի, ալկոհոլի անդունդի,  
բամբասանքի արտաշնչման,  
անկողնու մեջ պառկած մեղքի...

Իսկ պատիժը աշխարհի վրա չէ,  
այլ այն - անդրշիրիմյան միջավայրում,  
որ անբացատրելի է, անտեսանելի,  
ինչպես վախը, որ ապրում է  
իրերի լռության տակ...

Եղանակը թռիչքային չէ,  
սպասումը սպասում է ծնում,  
տրտմությունը՝ տրտմություն,



բառը՝ բառ, մարմինը՝ մարմին  
և կյանքը՝ կյանք...

Ու սարսափելի հերթ է  
էվոլյուցիայի դրամարկդի առաջ,  
որ երկարում է մինչև նախախնամություն...

\* \* \*

Տարիները խլել են իմ դեմքը,  
եթե Տերն իմանար ինչ դժվար է  
թաքնվել ծերության դիմակի ետևում...

Այսպես միտքն էլ է ընդհատվում.  
Ներս մտնողը սատանա է կամ սկսնակ բանաստեղծ,  
սրանց նմանությունն ու տարբերությունը  
չի բացատրվում ոչ մի բառարանում,  
ինչպես և այն, թե ինչո՞ւ  
եթե խոտին անընդհատ տրորում են,  
խոտն էլի աճում է նույն տեղում...

Բեմական ակնթարթներ...  
Անհասկանալի է՝ ծերությունը  
ծիծաղո՞ւմ է, լալի՞ս է, թե՞ փնտրում...  
ինձ զարմացնում է նրա այսօրինակ հավատարմությունը  
մահվանը ու որ ծերության սպասասրահում  
զնացքի հետ ժամանակն էլ է ուշանում...

\* \* \*

Ես հոգնել էի փիլիսոփաների իմպրովիզներից,  
Ես գնում էի բալենու ետևից,  
Ես հնայված չէի ու մեղու չէի...

Բալենին հեռանում էր ու հետն էլ ծաղկում,  
հեռանում էր՝ ժամանակի պատը շոշափելով,  
որ չբախվի պատին,  
որ ծաղիկները չթափվեն,  
որ...

Բալենին կույր էր, կամ միջավայրն էր անլույս,  
բայց նրա ծաղիկները լույս էին տալիս,  
ու կարողացա պատի վրա կարդալ,  
որ բալենիները խուսափում են  
ենթագիտակցության մատույցներում թաքնված  
փիլիսոփաների հետապնդումներից...

Ավելի ուշ  
բալենու պտուղները կարճրում էին իմ արյունից:

\* \* \*

Ընտրությունների  
իմ թեկնածուն հոգսն է,  
նրան հնարավոր չէ խաբել,  
նրա օրգանիզմում,  
նրա ցելոֆանե բջիջներում  
անարդարությունը  
ջրից ավելի է,  
համարյա հարյուր տոկոս...

Եթե իմը լինեին բոլոր քվեաբերիկները...

Իմ թեկնածուն հոգսն է,  
արդյունքները ամփոփելուց հետո  
մեր քայլերը նա է տնօրինելու...

... Առանց ընտրվելու...

\* \* \*

Աչքերը հոսում են – նրա կապույտ աչքերը...

Երկու ախոյաններ – Ամերիկա - Իրան,  
բառային հրաձգություններ (պղտորում են կապույտը),  
խաղաղության շրթունքների ճաքից  
նավթը կաթում է մտավորականի օսլայած բառի մեջ  
և օրվա նկարագրությունից  
նավթի հոտ է գալիս...

Չայացքս վեր է,  
Տիրոջ կարծիքը որոնելու  
ամեն ինչ կապույտ է, և կապույտից  
նավթի հոտ է գալիս...

Բնապահպանական աղետ՝  
ափ ընկած ձկան պես շնչահեղձ է պոեզիան...

Իսկ աչքերը հոսում են – նրա կապույտ աչքերը,  
փորձելով նավթը մաքրել  
օրվա գունատվող երակներից...

\* \* \*

Իջնողների ետևից իջնողներ կլինեն,  
բարձրացողների ետևից՝ բարձրացողներ,  
երկու դեպքում էլ հնարավոր է մոլորվել,  
հասկանալով,  
որ կյանքի մուտքը մեկն է,  
իսկ ելքերը կարելի է հաշվել հարյուրներով...

Ջերմաչափը ընկավ երկրի թևի տակից,  
երկիրը հիվանդ է,  
ջերմությունը հասնում է զառանցանքի,  
այնքան, որ անընդհատ շփոթում է իմ անունը,  
երբ նրա միակ որդին են  
կամ ուզում են նրա միակ որդին լինել...  
Ու ինձ է վիճակվել  
երկրի այրվող, ջերմող ճակատին  
սառը թրջոց դնել...

Երկրի հետ ջերմում, զառանցում են  
իջնողներն ու բարձրացողները,  
ես նրանց չէ, ուրիշին էի սպասում,  
բայց սատանան գրկեց իմ ուսերը...

\* \* \*

Այդպես էլ գուշակել էի, այդպես էլ պետք է լիներ,  
առարկաների վազքը պիտի ընդհատեր  
մարդու արթնացումը,  
հետաքրքիր անցյալն այնքան պիտի մաշվեր,  
որ կրունկի տակ վարդերն արյունեին՝  
ավետելով նոր հոգեվարքեր...

Ինձ չհաջողվեց Տիրոջը առանձին մի քանի բառ ասել,  
չհաջողվեց կղզի գտնել  
կամ օդու մեջ ինքս դառնալ կղզի,  
անհոգությունը վիճակախաղ է,  
ու ինձ որովհետև չի հաջողվում շահել,  
ինձանից միշտ վերցրել են ներշնչանքը  
իբր պարտքի դիմաց...

Լավագույն խաղացողը, որ ինձ հանդիպել է,  
որին հաջողվել է բոլոր խաղագուժարները տանել,  
ժամանակի նման է, բայց ժամանակը չէ,  
մարդու նման է, բայց մարդ չէ,  
քայլում է, բայց ներսից  
խլել են քայլելու ուղղությունը,  
արտասվում է առանց աչքերի,  
խոսում է, բայց բառերը ներսն են հնչում,  
ժպտում է, բայց անտեսանելի է,  
հետապնդում է, բայց նրան դժվար է գիտակցել,  
լռելիս – վրայից մահվան հոտ չի գալիս...  
Լավագույն խաղացողը – մենակությունը,  
որի համբերությունը հնարավոր չէ չափել,  
որի տարողությունը անսահման է  
և որին  
հաճախ են Տիրոջ հետ շփոթել...

\* \* \*

Ամեն ծնվողի հետ Տերը ծնվում է,  
բայց չի մեռնում ամեն մեռնողի հետ...

Անձրևաջուրը կախարդված է,  
ինչպես օձի հայացքի տակ խոտը...  
Անհայտ ուժը ձգում է իմ գիտակցությունը,  
նրանով ցանկապատելով ու մեկուսացնելով  
խելագար միտքը... Իբր կարելի է Տիրոջը խաբել...

Գլոբալ տաքացումը փոթորիկներ է արտաշնչում,  
ջրիեղեղներ,  
ջրի վրա  
քաղաքակրթության մանկությունը տարուբերելով,  
որը փորձում է Բարբի տիկնիկի ձեռքը բռնել  
փրկվելու համար կամ փրկելու...

Մենք գնում ենք առաջ, որը մոլորություն է,  
առաջը մեր թիկունքում է,  
ու նրանից հեռանում ենք...

Լվացքապարանների վրա մեր երազների տակաշորերը  
զրուցում են, ցանկանալով շուտ մեծանալ...

Ու Տերը ամեն օր ծնվում է,  
չինանալով՝ նե՞զր է ծնվել, դեղի՞ն, թե՞ սպիտակամորթ...

\* \* \*

Գինովցած,  
աշխարհն առել եմ ավերիս մեջ,  
բայց ես էի նրա մեջ,  
երբ և ինչպես եմ դուրս ընկել  
աշխարհից...

Մեքենաների աղմուկը,  
թռչունների մարմնի դողը,  
մատուցողի կիսաեփ ու ջլոտ հայացքը,  
աղջիկների ուսերից թափվող ալյուրը,  
բաժակների թաքստոցները,  
չինովնիկների նահանջը դեպի փսեսներ,  
ականջներիս մեջ խշշացող երաժշտության ավազը  
խանգարում են մտածողությանն իմ՝  
զարմանալի էլիտար մտածողությունն,  
ոտքը ոտքի վրա,  
հայացքը բանջարանոցի պես ցանկապատված,  
որ ուրիշի բառերը,  
ուրիշի հոգսերն ու տագնապները  
չմտնեն ներս...

Գինովցած  
աշխարհը սեղմում եմ ավիս մեջ,  
նարնջի պես դեղին ու փափուկ աշխարհը,  
և նրա հյութը  
ծորում է մատներիս արանքից՝  
բառեր,  
անվերջանալի բառեր,

փետրավոր ու ճաղատ բառեր  
(հալածված էլիտար մտածողությունից)  
լճանում են ոտքերիս տակ...

Գինովցած  
ինչքան եմ վերև բարձրացել,  
որ ոտքերս այրվում են արևի ջերմությունից...

\* \* \*

Չեն ուզում  
իմ ներսի քարը բարձրացնել,  
ինչո՞ւ,  
եթե նորից ցած է գլորվելու...

Երևակայությունն տնքում է  
այլմոլորակայինների այցելություններից,  
որ թերթում են մանկության էջերը,  
միայն թե ինչո՞ւ այդքան կոպիտ,  
միայն թե չջնջեն մորս ժպիտը  
ու չհամոզեն,  
որ ինքնասպանություն է մանկությունը,  
որին քաղաքակրթությունը  
դեռ չի սովորել վերակենդանացնել...

Այլմոլորակայինները շարունակում են թերթել,  
պարանի պես ձգել  
սովի մեջ թաքնված  
պատերազմի հիշողությունը...  
Մերթ փորձում են կաղ Արամի պես քայլել,  
մերթ մոխիր են քսում ժամանակի դեմքին,  
զարմանալով, որ մեր ժամանակը  
աչքեր չունի,  
որ եկվոր է իրենց նման,  
որին հյուրընկալել է իմ երևակայությունը՝  
չպահանջելով վճար ու զին...

Ներսիս քարը կարծես ընկավ  
այլմոլորակայիններից մեկի ոտքին,  
ու զգում են՝ խեղճը չարչարվում  
ու չի կարողանում  
քարը վեր բարձրացնել...

\* \* \*

Շողը սիրո բառի միջով է  
տաքացնում իմ մտքերը,  
որոնք տաքանալով հմայվում են  
կյանքի գեղեցկությունից...

Եթե ես մոռանամ ինձ  
կմոռանամ և քեզ...

Մտքերի ոտնահետքերը  
հիշողությունների դաշտը տրորելով  
ծուլվում են ծաղիկների գույների մեջ,  
այդպես են  
նրանք իրենց  
զգում լիարժեք ու ապահով,  
այդպես են թաքնվում  
հոգսի հետապնդումներից...

Եթե դու մոռանաս քեզ,  
կմոռանաս և ինձ...

\* \* \*

Թվում է՝ կրկնում եմ  
ինչ-որ մեկին...  
Եթե իմանայի՝ ում...

Ով ձեռքը ճոճում է  
ինձ հրաժեշտ տալու համար,  
ընդամենը  
երզը կորցրած հնչյուն է,  
ինչո՞ւ է ինձ հրաժեշտ տալիս,  
եթե չեմ ճանաչում...

Մի՞թե  
ես մի քանի անգամ  
հող եմ դարձել  
ու մի քանի անգամ  
մեկը վերականգնել է ինձ...  
Եթե իմանայի՝ ով...

Ձեռքը շարունակում է ճոճվել,  
գուցե հրաժեշտի համար չէ,  
գուցե ուզում է լուր հայտնել,  
եթե իմանայի՝ ինչ...

Իմանալու համար  
հարկավոր է երզը հիշել,  
բայց հնչյուն է պակասել...  
Գուցե դո-ն կամ մի-ն...

\* \* \*

Քրտնած ամբոխը  
շարժվում է՝ ինչպես ամպը երկնքում,  
ու անհմաստ է ինչ-որ մեկին փնտրել,  
ամբոխի մեջ  
Աստժո նշանն էլ է թաքնվում  
և ինքը ինքը չէ այլևս...

Շոգը մերկացել ու ջրի հետ է խաղում...

Կյանքը ապրելու համար չէ – բեռ է,  
ու բեռը պիտի տեղ հասցնել,  
ու բոլորը նույն ուղղությամբ են շարժվում,  
ու բոլորը բեռը դատարկում են նույն փոսի մեջ,  
ու թեթևանալով  
դժվարությամբ են գետնի վրա կանգնում՝  
ու թռչում են երկինք,  
ու երկինքը ուռչում է հիվանդ երակի պես,  
ու երկինքը ծերանում է միանգամից...

Ու անձրև է գալիս...

\* \* \*

Ի՞նչ էի որոնում, որ այս սենյակում հայտնվեցի,  
պիտի իմանայի, որ կորուստ է փնտրելը...

Վերադարձը հեղափոխական միջավայր հոգնեցրել է  
և ցավալի ներարկումի պես է դիմակների հեզնանքը...  
Ոնց որ մահվանը լինի այս ու այն իմ կեսը,  
Եվ ինձ կեսերի բաժանել է նույն ինքը՝ կյանքը:

Պատուհանի շրջանակից երևացողը աշխարհը չէ,  
աշխարհն ավելի տեսանելի է երևակայության մեջ...  
(ասում են հնարավոր է երևակայությունն էլ պատվաստել,  
ուզածդ երևակայությունը. չնայած ով գիտի,  
թե ինքը ինչ է ուզում)

Ես ի՞նչ էի ուզում, որ այս սենյակում հայտնվեցի...

Ջարմանալի է, գուցե երևակայության վրա սայթաքեցի:

\* \* \*

Տպավորությունը,  
որ օրվա ներկայությունը չի խանգարում,  
գալիս էր ճանճի տառապանքից,  
որը բախվում էր ապական,  
որը չէր հասկանում  
ինչու երևացող աշխարհը իրենը չէ  
ու ինչու իրեն չի հաջողվում  
հայտնվել այդ աշխարհում...

Մի քանիսը ծառ էին տնկում,  
տարիներ անց ծառերը հրաշալի տեսք կունենան,  
պաշտպանելով տարածքը  
վայրի պատկերների հարձակումներից...

Ծառ տնկողները բարի թվացին ինձ:

Պատերազմը, որից նոր ենք դուրս եկել,  
ճանճի պես բախվում էր ապական,  
չհասկանալով ինչու չի հաջողվում  
երևացող աշխարհում հայտնվել  
ու մեկ-մեկ դուրս գցել  
նոր տնկած ծառերը...

Իսկ օրը  
ճանճի ու պատերազմի աղմուկներից  
թաքնվել էր օժանելիքի դատարկ շշի մեջ  
և անբնականորեն ցնցվում էր ու փռտում...



\* \* \*

Կռիվը հուշերի հետ  
միշտ էլ երկուսի պատմությունն է...  
Ավելի լավ է ժանրը փոխես,  
որովհետև երկրորդը, որը դու չես,  
անընդհատ դավաճանելու է քեզ,  
իսկ ավելի ցավալի է,  
որ այդ երկրորդի տեղը չգիտես  
ու հնարավոր է երբեք էլ չհիմանաս...

Ծիծաղը, որ լսում ես,  
նախկինը չէ, ուրիշ է,  
չնայած ապրում է նույն մարմնի մեջ,  
երգը, որ խանգարում է քնել,  
ոչ ոք չի երգում այլևս,  
այն քո մաշկի մեջ է,  
մաշկիդ կպած,  
ինչպես ծերության ծանր հոտը...

Կռիվը հուշերի հետ  
դիակապտությունն է,  
երբ քո երիտասարդությունը  
փնտրում ես լռության գրպանի մեջ...

\* \* \*

Վարկով վերցրած աչքերը  
ներսը չեն տեսնում  
միայն դուրսը,  
իսկ նախադասությունը  
«խավարը սնվում է վախով»  
ներսում է...

Ժամանակակից աշխարհի գաղտնիքներից մեկը  
տիեզերքի հակակրանքն է,  
որից արհավիրքները անվերջանալի են թվում,  
տիեզերքի մատների մեջ  
կավից փափուկ է մեր կամքը,  
որով տիեզերքը  
նոր քառսի պատկերն է վերակերտում...

Եվ այդ ամենը՝ ներսում,  
որը վարկով վերցրած աչքերը  
նայում ու չեն տեսնում...

\* \* \*

Չանձրալի է այս առավոտը,  
արդեն ձանձրալի է,  
երկարամազ մեկը  
չի կարողանում արևի շողը հաղթահարել,  
ոնց չէի տեսել, որ մանեկեն է,  
տեսա, երբ ուզում էի օգնել...

Նա է օգնում, ով ինքը  
օգնության կարիք ունի...

Մտքի անկյունում  
փիլիսոփայության ծակ կոշիկը,  
որի մեջ փիլիսոփայության ստվերը թաքցնվել,  
փորձում է պարտակել  
անճոռնի թերությունը...  
Ես այս տեսարանը  
կարժես էլի եմ տեսել,  
երբ փիլիսոփաներից մեկը  
ընկնելիս իրականությանը կառչեց,  
որ փրկի անունը...

Հախումն ոչինչ չկա,  
անկարգ ոչինչ չկա,  
օրվա պարանիմ  
շարվել, ծվվում են ճնճուկները,  
փիլիսոփայի միտքը  
կարող է ճնճուկներին միայն վախեցնել  
և ընդամենը, և այսքանը...

Անցյալը

լպիրշորեն

չափում է ժամանակի քայլի երկարությունը,

նույն պատկերը,

ափսոս ծառերն են քչացել,

նույն նահանջը, նույն հեռանկարը,

հարաբերությունների նույն վիճակախաղը,

միայն ասֆալտի հանդգնությունն է շատացել,

մտնում է տուն - արդեն մտել է,

ամենուր է - արդեն ամենուր է,

փորձում է երևակայությանն էլ

տակը առնել - արդեն առել է,

միջնորդներ է փնտրում

երկնքի տարածքները գրավելու - գուցե գրավել է,

և բոլորը լուռ են - կամ արդեն լուռ են

աշխարհը ասֆալտի տակ

լռել - համրացել է...

Եվ ձանձրալի է այս ամենը,

արդեն ձանձրալի է,

ձանձրալի է իմ արթնացումն ու

մանեկենի անշարժությունը,

որ ստվերի պես երկարել է...

\* \* \*

Ողջ գիշեր սիրտս թևեր էր խնդրում,  
ո՞ւմ էր ուզում գրկել...

Դատարկությունը խորանում էր  
երկնքի մեջ  
վերաճելով սև խոռոչի,  
ինչ-որ մեկը հավանաբար  
դատարկության պատմությունը  
անգիր գիտեր,  
որ կյանքը փոխել էր մնջախաղի...  
Ոչ մի բառ ու ոչ մի հնչյուն,  
անկանոն շարժումների աջ ու ձախից...  
և դատարկության բույրը,  
որ տարածվում էր շարժումների քամուց,  
որ զարմանալի պատկերներ էր հառնում սև խոռոչից,  
և պատկերները ցուցասրահը փնտրում էին  
մերժվածների ներսում,  
և մերժվածները խելագարվում էին  
նրանց սառն ու անդուր հպումներից...

\* \* \*

Մոռացված երկու թռչուն  
ակնոցի պես՝ երկնքի աչքերին,  
իսկ թե ակնոցներից ինչ է երևում,  
դա արդեն ուրիշ թեմա է:

Թռչունների մարմնում  
այնքան քիչ երաժշտություն է մնացել,  
համարյա աննշան է դարձել  
թռչելու տարածությունը:  
Իսկ թե թռչունների թևերը ինչ են լինում,  
երբ հավերժ կախված են ու չեն թռչում,  
դա իսկապես որ ուրիշ թեմա է:

Թռչնի գրիպը  
մեռած ձայնի պես է թռչնի մարմնում...

Եթե թռչունները հարազատ չլինեին,  
չլինեին իմը  
ու իմ երևակայությունը չձգեին  
մինչև հրեշտակների անկողիները,  
հնարավոր է...  
միայն պարզ չէ՝ ինչն է հնարավոր  
(երբ իմը անհնարինն է եղել),  
եթե իմանայի ինչն է հնարավոր,  
այս ամենը կարելի էր  
մի թեմայի մեջ տեղավորել:

Բայց թռչունները վաղուց են մոռացվել,  
որովհետև իմ ականջների պես խուլ են,

անտարբեր երկնքի ծայներին,  
ու սա էլ խելագարներին ստիպում է վկայել,  
թե ականջներս էլ են թռչուններ եղել,  
որ օրերից մի օր գլխիս թառել,  
հետո մոռացել են՝ ոնց են թռչում...

Բայց սա այլ թեմա է, Աստված իմ,  
և դրա համար էլ կեղծ է հնչում...

\* \* \*

Փողոցային շունը  
(զարմանալի է, որ փողոցն ու շունը  
հոմանիշներ են անտերության բառարանի մեջ)  
և շունը,  
ծառի տարիքը արհամարհելով,  
բարձրացնում է ոտքը ծառի մարմինն ի վեր,  
ու հետևանքը  
իր համ ու հոտով հիշեցնում է ռոմանտիզմը...

Եթե հիշեցնում է - նշանակում է այլևս չկա,  
փոխարենը կացնի ժանգոտ դեմքն է  
կախաղանի օղակի պես ծառի շուրջը,  
և, այնուամենայնիվ,  
կացինն ու ծառը չեն իրականությունը,  
այլ՝ ծառի վերքի միջով անցնող ցավը,  
որ քրքրում է անտերության բառարանը  
և, իր ուզածը չգտնելով,  
շան աչքերը դարձնում է լճափոսեր...

Բայց շունն առավել անտեր է,  
որովհետև չգիտի, որ անտեր է,  
չի տառապում,  
որովհետև ցավն ավելի է, քան նրա միտքը,  
և ցավը նրա մտքի մեջ չի տեղավորվում,  
դրանից էլ նրա համար  
ցավը չէ, ծակ ոսկորն է իրականությունը,  
և արդեն պարզ է  
կացնի ատելության բառակազմությունը,  
քանի որ ինչքան էլ փորձում,  
միևնույն է,  
անփոփոխ է մնում շան գիտակցությունը...

\* \* \*

Նա միշտ երկնքից է իջնում,  
 լույսերի մեջ, ինքն էլ լույս տալով,  
 բայց այդ օրը  
 (չեմ հիշում ինչ օր էր այդ անիծյալ օրը)  
 դռնից ներս մտավ,  
 և մաշկը զարմանալի մուգ թվաց,  
 և հայացքը ճմրթած թաշկինակի էր նման,  
 որ օրորվելով անսպասելի գետնին ընկավ  
 և նույնքան անսպասելի  
 հենց ինքը ոտքը թաշկինակին դրեց,  
 և նրա ձայնի վրա  
 անհայտ մատնահետքեր երևացին,  
 և նրա բերանը խավարի պես  
 անընդհատ կլանում էր լույսը  
 տզրուկի պես ուռելով և ընդարձակվելով,  
 և նրա ձեռքերը երկարել էին մինչև կրունկները,  
 և թվում էր՝ ցատկում է,  
 չնայած անշարժ էր, ոտքը՝ թաշկինակի վրա,  
 և ամբողջ մարմինը ինձ նահանջ էր թվում,  
 և էլի բաներ էին կատարվում,  
 որոնց գիտությունը դեռ չի ուսումնասիրել,  
 որոնք վանում էին ինձ, ստիպում  
 զարմանքից ու վախից ինքս իմ մեջ պապանձվել,  
 որովհետև առաջին անգամ էի տեսնում  
 ինչպես է մարդու մեջ մահը ծնվում...  
 .....  
 .....  
 - Դուք պնդո՞ւմ եք, որ հիասթափվել եք,  
 որ այլևս չեք սիրում նրան:  
 - Քաղաքացի դատավոր, պնդում եմ,  
 մատնահետքեր են հայտնվել նրա հոգու վրա,  
 թե չէ սերը նույնն է մնացել:

\* \* \*

Երազի ետևից անվերջ գնացողը  
 չի ուզում կամ չի կարողանում արթնանալ:

Երազը - նույն ինքը անուրջ,  
 նույն ինքը - տեսիլք,  
 նույն ինքը - չբավարարված ցանկություն,  
 նույն ինքը - խակ խաղող, նույն ինքը - ցնորք,  
 նույն ինքը - չիմաստավորված հասունություն,  
 նույն ինքը - շպարված գոյություն...  
 Եվ ինձ չի հաջողվում  
 նրան դեպի իմ իրականությունը քաշել,  
 որովհետև դրա համար պիտի տեսնել,  
 իսկ տեսնելու համար պիտի աչքերը բացել,  
 որը վախենում եմ ամեն, որովհետև  
 լույսի մեջ երազները ճաք են տալիս,  
 փշրվում ու անհետանում են,  
 ինչպես մանկությունը, ամանուխի բույրը,  
 և հնարավոր չէ այդ ընթացքը կարգավորել,  
 անշարժացնել ու պահել լավ օրերի համար,  
 որովհետև ինչը մարդուն տանում է իր ետևից,  
 չի կարգավորվում ու չի անշարժանում...

Ու եթե արթնացել ես,  
 եթե իսկապես բացել ես աչքերդ,  
 առաջինը մահվան դեմքն է,  
 որ ընդառաջ է գալիս,  
 և զգում ես, որ դեմքը  
 աչքեր չունի՝  
 հարթ է ու անտարբեր ինչպես թիկունքը  
 երազի ետևից անվերջ գնացողի...

\* \* \*

Սա իհարկե այն ժամացույցը չէ,  
որով հաճույքի վայրկյաններն են հաշվում...

Այս ժամացույցի թվացույցը  
շարունակում է մեր մարմինը մնալ,  
և սրա թվերն ավելի տարողունակ են,  
լիքը՝ կյանքի մանրամասներով,  
և սլաքները ինչպես էլ պտտվեն,  
շարժվում են մանկությունից ծերություն,  
շարժվում են  
մի քանի թվերի վրա  
սովորականից երկար կանգ առնելով,  
մի քանի թվերի վրա  
որս տեսած գայլերի պես փշաքաղվելով,  
որովհետև այդ թվերի արանքում է  
գայլերի շունչը մասնատվում,  
գայլերը նույնն են,  
որոնց մերժել է ժամանակը՝  
նրանց հավերժորեն սոված լինելու պատճառով:

Եվ սակայն  
սլաքները շարունակում են պտտվել  
և շրջանը լրացնելուց հետո  
հայտնվում են ուրիշ մարմին-թվացույցի վրա...  
Ժամանակը շարժվում է  
հավերժորեն մարմնից-մարմին,  
իսկ թվերի արանքում  
հայտնված որսորդները  
շարունակում են հետապնդել  
սոված ու ոռնացող գայլերին...

\* \* \*

Առավոտը գրկում է ուներս,  
բայց նրա համար անհասկանալի են,  
ինչպես չինարեմը...

Փայտահատի կացինը  
շուրթերիս վրա է կտրում  
բառերի արմատները,  
որի համար էլ լուռ եմ,  
որի համար էլ լռության անբնական փոշին  
մարմինս բաժանում է  
հավասար քառակուսիների,  
որոնցից յուրաքանչյուրի մեջ  
տարբեր են,  
աչքս պատուհանի միջով՝  
երկնքի կապույտ պորտին,  
որից չեմ կտրվել ամբողջովին,  
որից արյունս կապույտ է, ինչպես թանաք...

Եվ ինչո՞ւ առավոտը  
անորոշության փողկապը կապեց  
պարանոցիս...

Փչացած ծորակից  
աննպատակ հոսում էր կյանքը,  
թրջելով երկինքը  
և ոչ թե ինձ...

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԱՊՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ» բանաստեղծական ընկերությունը	5
Ես կարող էի ավելին	7
Օ՞ձն է մոտ բնությանը, թե՞ բառը	8
Կյանքը ցանկապատ է	9
Թռիչքը թռիչքի վրա	10
Պայծառատեսության համար շատ բան հարկավոր չէ	11
Ենթադրում եմ՝ ովքեր են ինձ խանգարողները	12
Ինչ-որ մեկը	13
Բանաստեղծությունն էլ	14
Ես այս ժամանակի հարազատը չեմ	15
Եթե ուզում ես սիրել	16
Մեկի թեթև ձեռքով	17
Աշխարհը ձեր միտքն է	18
Նորից ձմեռ, նորից ցուրտը	19
Միջանկյալ է տունը, որի մեջ ապրում եմ	20
Փողոցի կերակրափողի միջով	21
Մեռնելն արվեստ է, ինչպես որ ամեն բան	22
Իմ մանկության ընկերներին	23
Ոտքերս ցավում են	25
Գրպանահատի ձեռքը	26
Չեմ ձևացնում, թե ապրում եմ	27
Արթնանում եմ ծափահարություններից	29
Օդում թռչող ծիծեռնակը ես եմ	30
Իմ մտքերը տաք են՝	32
Քո պատուհանը դրախտի դռան պես է	33
Մենակությունը հիշողության մեջ	34
Ինչ էի փնտրում	35

Կար գիշերային քամին	36
Ծխախոտ, սուրճ	37
Հայը անուն չէ	38
Ես չեմ վերադառնալու	40
Աստծո աչքն ինչ էլ տեսնի	41
Օրը հայելու մեջ	42
Հարցազրույցն ինձ հետ չէ	43
Տազնապան այնքան մեծ էր	44

### ԹԱՓՎԱԾ ՁԵՆԱԳՐԵՐԻ ՄԻՋԻՑ

ՀԱՅԵՐԸ	46
Գիշերաժամը ուղղանկյան մեջ	47
Սա այն տարածքն է	48
Սա իմ բիբն է	49
Գործազուրկների գործը	50
Հնարավոր չէ	51
Գյուղացին հողի ուսերը գրկել	52
ՏԵՆՉ	53
Կարոտը տարածություն է	54
ԱՇՈՒՆ	55
Ինքդ պիտի գտնես քո անունը	56
Չի՞ եղել	57
Մեկնումեկը կվերցնի՞ ընկալուչը	58
Սահմանը	59
Հնարավոր չէ	60
Հրավիրատոմսը ուղարկել էր ծերությունը	61
Ահա իմ մարմինը	62
Դժգոհ մարդու երևակայությունը	63
Սենյակը	64
Բառը	65
Քարը բացառիկ զգուշավորությամբ	66
Մի երազ ունեի, որ այդպես էլ չաճեց,	67
Հիշողությունը կորցրել է ուրախությունը	68
Երկու միայնակ կա	69

ՏԻԵԶԵՐՔԸ	70
Ուրիշ է հարուստների դեմքը	71
Ժամանակը լիքն է աղետներով	72
Ազատությունն այնքան էլ չի սիրում	73
Հույսի շարունակությունն ատելությունն է	74
Մեկը անընդհատ խոսում է	75
Սպասումի ծառը ցրտահարվեց	76
Ծաղիկն իր մերկությունը	77
Հիշողության ուժը չի հերիքում	78

### ՍՏՎԵՐԸ ՍՏՎԵՐԻ ՏԱԿ

ՍԱՐԴԱԿԱԶՍՈՒԹՅՈՒՆ	80
Յուրաքանչյուր տղամարդու իր կինը	82
Սուրճը սրճեփի մեջ	83
ԵՐԵՔ ՆՈՎԵԼ	84
1. Այս պատմությունը	84
2. Պարոնայք... Եվ դատապարտյալը	86
3. Մանկությունը չի հեռանում	88
60 ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏՈՂ	89
Չեմ հիշում՝ երբ եմ գրել	91
Փոխվել են ժամանակները, և մեղուներն էլ նախկինը չեն	92
Սիրո ստվերն ավելի մեծ է, քան սերը	93
Ցանկությունների խորհրդանշական ծառի տերևները	94
Կյանքից հիշողություն չվերթի	95
Տարիները խլել են իմ դեմքը	97
Ես հոգնել եմ փիլիսոփաների իմպրովիզներից	98
Ընտրությունների	99
Աչքերը հոսում են – նրա կապույտ աչքերը.	100
Իջնողների ետևից իջնողներ կլինեն	101
Այդպես էլ գուշակում էի, այդպես էլ պետք է լիներ	102
Ամեն ծնվողի հետ Տերը ծնվում է	103
Գինովցած	104
Չեմ ուզում	106
Շողը սիրո բառի միջով է	107

Թվում է՝ կրկնում եմ	108
Քրտնած ամբոխը	109
Ի՞նչ էի որոնում, որ այս սենյակում հայտնվեցի	110
Տպավորությունը	111
Կռիվը հուշերի հետ	112
Վարկով վերցրած աչքեր	113
Չանձրալի է այս առավոտ	114
Ողջ գիշեր սիրտս թևեր էր խնդրում	116
Մոռացված երկու թռչուն	117
Փողոցային շունը	119
Նա միշտ երկնքից է իջնում	120
Երազի ետևից անվերջ գնացողը	121
Սա իհարկե այն ժամացույցը չէ	122
Առավոտը գրկում է ուսերս	123



Սանվել Նրայրի Կոսյան  
ԿԻՍԱԲԱՑ ՀՈՒՇԵՐ  
(բանաստեղծություններ)

Հրատարակչության տնօրեն՝

Խմբագիր՝  
Շարվաճքը և  
Էջադրումը՝  
Սրբագրիչ՝

Բագրատ Ալեքյան  
Բ. Ալեքյան

Մ. Էդիլյանի  
Ա. Ղազինյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84<sup>1/16</sup>:

Ծավալը՝ 8 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:  
Գինը՝ պայմանագրային:

Տպագրվել է

տպագրատանը: